



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Առ Եր Ռա Այս Գի Այս Գի Այս  
Հայութք: ԵՐԵՎԱՆԻ ՏԱԿԱՆ ԵՐՄ  
ԱՐԵԱԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ. 1891թ. 99. 4

23928

# ԱՐԲԵՑՈՂ

bh

ՏԱՐ ՍԵՐ

ՊԱՏԿԵՐ ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՅՐԱՀԱՄԵԱՆՑԻ.

—

ԲԱՐ ԱՐ

Տպարան Ա. Բ. Տէր-Յովհաննիսեանցի

1890.



891.99  
թ - 94

891.99

թ-94

Գերազնիւ Պարսն

73890 - Ա. 7.

Дозволено цензурою. Тифлисъ, 23 Ноября 1889 г.

ՆԿՈՂԱՅՈՍ ԱՐԱԿԱՄԵԱՆԻՆ

ԵՒ ՆՈՐԱ ԱՐՈՒԹՅՈՒ

ՏԻԿԻՆ ՄՐԲՈՒՀՈՒՆ

Խոհրուժ է

2003

ՀԵՂԻՆԱԿԸ



126 - 85 -

Չեր անուամբ եմ պսակում իմ այս դոյզն  
աշխատանքի ճակատը, 'ի նշան այն քաղցր  
երախտագիտութեան, որ ունիք առ իս ներկայ  
գրքոյկո ՚ի լոյս ընծայելու վերաբերմամբ: Այս  
իմ նուէրը չնչին է, սակայն Լիայոյս եմ Չեր  
մեծահոգութեան, որ ընդունելու չէք մերժել:

ԱՐԵՍԻ ԹՈՒՄԱՆԵԱՆ:

Հայոց անձակ պարագայու առ պայտ օքայ այս շնուռակաց  
ու բողոքուն առ ըն չի պար Այս արագալ ու անձուն շնուռակաց  
ու առ պայտ պար կարեն պար ըն չի պար Այս արագալ ու անձուն  
շնուռակաց ու պար պար կար պար պար պար պար պար  
**Ա**

Ի՞նչ անեմ, ուր դնամ, ուր կորչեմ, ում վիզս ծռեմ,  
ում ծեռս դէմ անեմ. աւերակ դառնայ Էսպէս քաղաքը  
բարութիւնը միանգամից քաղւել է, բարի մարդիկ տա-  
կաւին անհետացել են: Թու, անիծւիս դու էղպէս բաղգ:  
չմ՞ . . . ախր ի՞նչ պէս անիմ. տունս կաթում, տաշ-  
տիս հազը սպառուած, կինս աղջիկ ծնած, զրպանումս  
կոպէկ չկայ, ամանումս իւղ չւալումս բրինձ: Տէր-տէր  
պիտի գայ, կնքահայր, ինչ զիտամ-աչքալույս ասողներ: Զէ՞,  
որ տէր-տէրին ու կնքահօր ծուածեղ պիտի լինի, մնա-  
ցածներին չայ, մրգեղէն: Կիմա որտեղից նարեմ, ում դու-  
ռը զնամ, անունս էլ հօ Աստուած հեռու տանէ', էնպէս  
կոտրւած է, որ ում մի խօսք եմ ասում, երեսը շուռ է  
տալիս հեռանում: Փառք քեզ Աստուած, փառք քեզ: ախր  
ես ի՞նչ մեղը էի արել, որ օրս էսպէս սեազաւ է՞:

Գլուխը կոր, ծեռները զրպանում, «Փուրաժէն» զլ-  
խին ծուռ զրած, Շուշի քաղաքի հրապարակի մի անկիւ-  
նում կանգնած էր կօշկակար համբարձին ու ինքն ըստ  
ինքեան մրժմրժում այսպէս: Նա հազած էր կապտազոյն  
զարաք արխալուղ, մէջքը կապած երծամով զարգարած  
կաշուէ զօտի, հազած էր հնամաշ մահուղէ չուխայ՝ բրդեա  
մոխրազոյն մաշւած վարտիկ, զոնզոյն թելերից գործած

կիսամաշ գուլպայ երեսը սև զարշապարը կանաչ կաշւէ չմոշկներ։ Արխալուղի դօշը քիչ տեղ նա պնդագրել էր, իսկ քիչ տեղ բաց թողել։ Կոկորդը իսպառ բաց էր, որտեղից և երեսում էր նրա կարմրագոյն շապիկի օձիքը։ Այդ բոլորը համապատասխանում էր նրա գէմքի գծագրութեան։ Գլխի մազերը տեղ տեղ սկսել էր սպիտակել։ Երեսը սափրում էր, բայց զրեթէ երբեմն երբեմն։ Այսպէս որ միշտ նրա կարմրագոյն, սակայն քիչ կնճռապատ այտերի վրա միշտ կարելի էր տեսնել նոր աճած և քիչ մեծացած ալէխառն մազեր։ Բեխերը հաստ էին և սանրած զէպի վերև, այնպէս որ շրթունքները բոլորովին բաց և ազատ էին ամեն ինչ ուտելու և խմելու։ Նա կանգնած մտածում էր։ Երբեմն ձեռները հանում էր զրպանից ժոժրակն ու զրլուխը բորում ու դարձեալ կոխում զրպանը, Երկար տասանվում էր ու շարունակ մտածում։

Զէ, առաջ մի ժամ զնամ, մի քիչ քէփս լաւացնեմ յետոյ էլի հեշտ է։ Բօօ.., սիրաս ուզում է տրաքւի շատ հարկաւոր է, որ հարիւրը հարիւր մի խօսք պիտի ասի, վերջը մեռնելու չմ՞ն, — հենց մի անդամից սրաճագ դառնամ։ Ո՞վ է գաւելու այնուհետեւ ինձ վրա։ կին, երեխայ, ազգական բոլորն էլ հենց այժմեանից զգւած են ինձանից, մեռնելուց յետոյ էլ որքան պիտի ուրախանան։ Գնամ, զնամ — հիմա որտեղից որ է մի քանի էլ ժամաւորներ կլինեն այնտեղ։ Այսպէս ինքն բատ ինքեան խօսելով համբարձին դանդաղ քայլերով զիմեզ Մկրտիչ զինետունը։

Այդ տեղ էր նրա «ժամ»-ը, այդտեղ էր գնում աղօթելու և այգաեղ պէտք լինէին նրա աղօթակիցները։ — Բարի լուս, Մկրտիչ, մաղթեց նա, ներս մտնելով։ — Այ, Առառուծոյ բարին զլխիդ տուած քո համբարձի։

Ա, որտեղես, էլ չես երեսում։ պատասխանեց զինեվաճառը։ — Է՛քք։ Մկրտիչ ի՞նչ անեմ. հալս հալ չէ, շատ խարաբ եմ։

— Ի՞նչ է պատահել, ասա տեսնեմ։  
— Է՛քք ինչ ասեմ է։  
— Լօթիանայ մի ասա տեսնեմ, ախր ի՞նչու ես տխուր է։  
— Ինչ անեմ, Մկրտիչ, կինս աղջիկ է ծնել, զրպանումս էլ մի կոսէկ չկայ, մնացել եմ էսպէս շուարած։  
— Բա հենց զրա համար՝ ա, դու լինիս սաղ՝ զրա բանը խեր է։

— Հմմմ... Ժպտազ իւր մտքումը համբարձին. քեզ կը եմ ճանաչում՝ զիտեմ թէ ինչ պտուղ ես, առանց զրաւի մի կոպէկ մարզու վող չես տալ։ Տանն էլ հո ոչինչ չի մնացել. աման չաման — բոլորը կու գնաց էս անտէր տեղը. ամմաչարէս ինչ՝ էլի պիտի մի կերպ անեմ. մէջնակ կաթսան կբերեմ, կտամ էլի էս անիծամին. վեց մանէթ եմ առել՝ էն էլ զիտեմ մեծի պէս կէս զինը պիտի տայ, երեք մանէթից աւել չի տալ, գէ, էլի մի բանէ՝ մի մանէթի իւղ ու բրինձ կ'առնեմ, մի մանէթի հաց, չայ շաքար ծու, ուրիշ դէս-դէն, մի մանէթը կպահեմ յետոյ տեսնամ էլ ինչ զահրումարի կտամ։

— Մկրտիչ, հիմա ինչպէս անեմ. խօսեց համբարձին։

— Ա, ինչ պիտի անես, էլ որ օրւայ համար ես պահում էդ մէջքիդ զօտին, ա, ծախի կեր է, օրդ անզկազրու, յետոյ էլի Սատուած ողորձած է, էնպէս կարծում ես թէ տղա կամ աղջիկ քեզ հողի են տալու, կամ չէ մեռած տեղդ վրադ խոնկ են ծխելու և կամ մոմ վառելու։ — Ես իմ Սատուածը համ ուտելու են, համ էլ հազար անդամ գերեզմանիդ հայհոյելու. խորհուրդ տուեց այսպէս Մկրտիչը։

— Զէ, Մկրտիչ, զօտիս դեռ մնա՝ ամմա տանը երկու կաթսայ է մնացել, էլ որ ամես ոչինչ չկայ. նրանցից մէկը բերեմ քեզ տամ, դեռ մի քանի մանեթ տուր խարշեմ. յետոյ էլի հեշտ է:

— Լաւ, վնաս չունի, Համբարձի, թող ամեն ինչ քո քէ-ֆովը լինի. — Պէ գնա բեր:

— Դէ տուր, տուր, մի բաժակ տուր տեսնեմ ու գնամ բերեմ:

Մկրտիչը ամենափոքր մի բաժակ արաղով լրջրեց ու զրեց Համբարձու առաջ:

— Ա՛, դէ էնքան առւր, որ բողաղս թաթախի է, այս անաստուած. ասաց Համբարձին և ապա տրտնչալով արաղի բաժակը վերջրեց ու խմեց.

— Դեռ էդ խմիր, գնա կաթսան բեր, այնուհետեւ հեշտէ. ամ, գու չգիտես, որ սաղ բօչիան էլ ուղես քեզ չեմ խնայել:

Խմեց Համբարձին՝ բաց ուր: Նա միենոյնը մնաց: Տիսուր ու տրտում: Մի քանի կաթիլ արաղը միթէ կաղդէր, միթէ կիփարատէր նրա ցաւերը: Նա խորասուցւել էր մաքերի մէջ: Անդաղար հառաջում էր:

Քո զողած փորիդ մատաղ,  
Էդ զիք զիք ոտներիդ մատաղ,  
Միշխտ չըերին մատաղ,  
Կարմիր փրփուրին մատաղ:

Թքել ենք աշխարհի վրա,  
Կին երեխի ու տան վրա,  
Փող ու ոսկու կարքի վրա,  
Բոլորը կարմիր զինուն մատաղ:

Այն ժամանակ երբ Համբարձին մաքառումէր հա-

զար տեսակ մտքերի դէմ, յանկարծ նրա ականջին հնչւեց այդ երգը:

Ուրախութեան մի թեթև նշով փայլեց Համբարձու երեսին. յըմհը, փառք Աստուծոյ, քէֆս քէֆէ, տնաշէն-ներ դէ շուտ եկեք է.՝ ասաց նա իւր մտքումը:

Վերոյիշեալ երգը երգելով ներս մտան չորս տղամարդիք:

— Բարով, էջ Մկրտիչ, զաստոյկային մի պինտ խփելով մէկն այսպէս բարի օր մաղթեց զինեվաճառ Մկրտիչին: Իսկ երբ նա երեսը շուռ տուաւ ու տեսաւ խանութի մի անկիւնում զիսակոր Համբարձուն սկսեց զոռալ. բօօ, այ շանտղա, որտեղե՞ս, էլ չես երեսում, սատանի նման ինչպէս է թագ կացել ու ծէնը փորը զգել է, — բա՛ — բո՞ւ . . . . բօօ, Համբարձի, բարի օր, բարի օր, լուսը քեզ տեսողին, ամ, որ չհանդնամ ես կորել, հոգիներս գուրս պրծան ետեւիցդ մանգալուց. այսպէս ամեն տեղից զոռալով բոլորն էլ բարի օր մաղթեցին Համբարձիին:

— Զէ, էս «քեօբօղլուս» «ուամուղը» շատ փիս է. ասաց նրանցից մէկը:

— Ա՛, փորացաւը չգիտես, միտքն ու զարդը էն սուրբ չուրն է էլի. ասաց մի ուրիշը:

— Դէ արի. ասաց առաջինը. Համբարձի, արի մի բաժակ զահրումար արա ու համբերիր յետոյ տես ինչեր պիտի լինի է:

Այս մարդկանց մէջ բաղաքաւարի խօսակցութիւն միանգամայն չկայ, նրանց համար մեծ զուրանութիւն է, երբ հայհոյում են միմեանց: Համբարձին սրանց ուրախսութեան չէր մասնակցում: — Նա շատ տիսուր էր:

Ի՞նչ անէր, առւնը միան էր լնկնում, ժուխը քթիզը

ըլքլում էր: Նա վարանման մէջ էր: Հանգստութիւն չու-  
նէր:— Սակայն արաղի զօրութիւնը մեծ է, նրան ամեն  
ինչ մոռանալ կտայ:

Սարգիսը— նրա ընկերներից մէկը թեփքը բոհելով  
առաջ տարաւ ու մի մեծ բաժակ արադ խմացրուց:

Համբարձին քիչ քիչ սկսեց բացուել: Նա մի քանի  
ըսովէից յետոյ բոլորովին կլաւանայ էնպէս չի մնալ, ըն-  
տանիքի հոգսն էլ շուտով կհեռանայ սրտից, էլ նրան ոչինչ  
չի տանչիլ:

Գինետան մէջ ընկած էր մի երկար թախտ: Սար-  
գիսը հրամայեց Մկրտչին, որ մի զորդով ծածկէ նրա երեսը:

Մկրտիչը իսկոյն կատարեց: Տղերը շրջանածե նս-  
տուեցին:

— Մկրտիչ բեր տեսնենք. Գոչեց Սարգիսը:

— Մկրտիչը փութով բերաւ խաղաթղթերը ու գրա-  
նը առաջ:

— Ա, էս Մանասը ախը ի՞նչու չ'եկաւ է. ասաց նրան-  
գից մէկը:

— Կ'գայ, էլի ի՞նչ ես շտապում. պատասխանեց մի ուրիշը:

Դեռ խօսքը սրանց բերաններումը, յանկարծ ներս  
մտաւ մի երիտասարդ, նրա հետ և մի մշակ. վերջինիս  
ծեռին կար մի թաշկինակ լի մսով, նոնով սոխով և մի  
քանի տեսակ թարմ մրգերով:

Երիտասարդը Մանասն էր:

— Ա, որտեղ կորար. գոչեց Սարգիսը:

— Է՛՛, քէֆս վատ է:

— Բօ, ի՞նչ պատահեց:

— Է՛՛, ոչինչ:

— Ինձ թաղես, ասա տեսնեմ:

— Ախը ի՞նչ ասեմ է:

— Ես մեռնեմ Մանաս:

— Էն շան տղերը տեսայ լաւ չեն խօսում:

— Ախը ի՞նչ են ասում:

— Է՛՛, ոչինչ:

— Դէ մարդ էս մի ասա տեսնեմ:

— Ասում են, հէրն ասել է թէ «ես աղջիկ չունիմ  
մարդու տալի», թէ աղեն չեմ հաւանում . . . . . , է՛՛  
ի՞նչ զիտամ է»:

— Քո արեն եմ ասում. Էն աղջիկը մի զիշեր կզնամ  
տանից գուրս կըաշեմ ու էստէղից մի «բաշ» կկորցնեմ  
համ, ախը ինձ «պել սեաքի» կասին է՛՛:

— Եաւաշ, է՛՛է՛՛, մի քիչ դէվեր արի, քաղըրցու ասած.  
գոչեց մի անկիւնից Առաքէլը:

— «Սեան ընօլ» գրուստն եմ ասում, ախը շան տղերը  
ի՞նչու չեն համաձայնվում, սրանից հօ լաւ աղի չեն տալու:

— Է՛՛է՛՛, Սարգիս, զու էլ էսրան ժամանակ մի բան  
չհասկացար. ախը զիտամ չ՞ս զալան է՛՛. հազարը հա-  
զար մի խօսք է ասում. ասում են հարբողէ, կարտեօժ-  
նիկ է, է՛՛ ես ինչ զիտամ էլ ինչեր ասես, որ չեն ասում:  
չիմա զրա համար են էղպես խօսում, եթէ չէ էս «հա-  
ռամզագեն» մի մաիկ առւր է, կասես մի հրեշտակ լինի.  
զրա բօյին, զրա պատկերին, ուխայ. աղջիկ լինէր ես էլ  
զեռ չպատկուած իսկոյն կպատկէի զրա հետ. ասաց կի-  
սահեղնական ձեռվ Առաքէլը:

— Ա, զիտէր զրանը ինչ շան տղերը են՝ աղջիկը միան-  
գամայն մեռած է սրա համար. խօսեց ընկերներից մի  
ուրիշը— Մելիքսէթը, ապա զառնալով Մանասին.— Ա, իսկի

սիրտդ չախըրազնես, հաստատ իմաց, որ էն սղչիկը քոնն է  
ու քոնը՝ փողի զօռ կզգենք, աէրտէրին «տակը կըզնենք»  
ամեն ինչ նրանք կշինեն: Է՛տ ոչ էն, ոչ էս, մի լաւ զիր  
անել կտանք նրանց ամենքին էլ կտաքազնենք Մանասի  
վրա, այնուհետև իրենք կսկսեն աղաչլ. խօսեց Սարգիսը:

Էն ժամանակ աղչկայ մաղիզը պէտքէ լինի, որ Մա-  
նասի մաղի հետ զիտեմ ինչ քաւի պէտքէ ածին, որ  
տաքազնին միմիանցից վրա:

Ես իմ Աստուածը զրա վերջը շատ լաւ է. դոչեց  
Սարգիսը. տես... տես... (Սարգիսը փոշտաց) իմ մի հատ  
սաբրը շատ խեր է. աւելացրեց նա:

Մանասը ոչինչ չէր խօսում: Նա լուռ էր զլուխը  
քարշ միսր յօշոտում էր:

Մեր լոթիքը կարար մի առ ժամանակ թողեզին:  
Մանասի հարզը նրանց զրաղացրեց: Բոլորն էլ մասնակ-  
գում էին այդ խօսակցութեան: Սակայն համբարձին ոչինչ  
չէր խօսում: Նա լուռ ծխում էր:

Երկայն չիբուխի ծայրից ծուխը մանր օղակների  
նման քլքլում էին և պանում դէպ վէր: Համբարձու զլսի  
մէջ էլ հազարաւոր մաքեր այզպէս քլքլում էին:

## Բ

Շուշիի հին հանգստարանի թաղում, նեղ փողոց-  
ներից մէկի վրա բնդամ էր մի հին զրեթէ կիսաւեր տուն:  
Տան հանդէպ ատարածվում էր մի բնդարձակ մառազարդ  
այզի: Այդ տանն էր բնակվում հաբմարձին և դա նրա  
սեպհականն էր: Շատ մեծ չէր նրա բնաւանիքը: Ընդամենը  
հինգ հոգի էին: Ինքը համբարձին էր, իւր կինը պառա-  
ստում է այսպիս: մի կերպ տունը կառավարում: Հուռին  
այս անգամ աղջիկ էր ծնել: Աչքալոյս ասողներ չկային:

Ժայրը և երկու գողարիկ տղաներ: Համբարձու կինը – երի-  
տասարդ հուռին մի անհատ էր այդ քաղաքի մէջ: Մարդ,  
սկսուր, երեխերը զրեթէ ինքն էր պահում, ինքը կերա-  
կրում, ինքը նրանց բոլոր հոգսերը տանում:

Համբարձին էլ տանը ոչինչ չէր թողել: Եղած չեղած  
բոլորը զինու, արաղի էր կտրզել: Խեղճ կինը առաւօտը  
զեռ լոյսը չժաղաց տեղից վեր էր կենում, ճախարակը  
ծեռքն առնում, թել մանում, գուլպա գործում, երբեմն  
ուրիշների լուազըն անում, շոր ծեռում, կարում, կարկա-  
տում և այսպիս: մի կերպ տունը կառավարում: Հուռին  
այս անգամ աղջիկ էր ծնել: Աչքալոյս ասողներ չկային:

Էհ, աղչկա համար ինչ աչքալոյս, մի ցաւ ու պա-  
տուհաս է ծնել խեղճի ցաւերը թիչ չէին, պակասութիւնը  
թիչ չէր տանջում, զեռ հիմա էլ Աստուած աղջիկ է տու-  
ել. ասում էին այսպէս հարեւանները: Մի քանի բարեկամ-  
ներ հաւաքվել էին: իւրաքանչուրը մի խօնչայ էր  
բերել: խաշած ու տապակած հաւեր, մի մի աման ծու-  
ածեղ, հալւա, զաթա, իւզահիւնց և այն: – Մէկն էլ հաց  
էր բերել, մի ուրիշը իւղ ու պրինձ, պանիր և ուրիշ  
գէս գէն: Էհ, Աստուածոյ առւածից ունեոր բարեկամները  
հօ միանգամային աչքաթող չէին անելու: –

Մի ժամանակ համբարձու տունն էլ ախը տուն էր,  
հարիւրաւոր աղքատներ լիխացել են նրա սեղանից, շատ  
թշուառներ նրանով են ապրել: Բայց ինչ արած՝ այն օրից  
երբ հանաչեց էդ անիծած զինուն ու արաղին ու էդ  
անարանդ «կարտ»-ին, զրկւեց իւր բոլոր ունեցածներից,  
համ պատիւր բնկաւ, համ էլ ամենքի աչքին առելի դա-  
ռաւ: Բոլորն էլ զզւել էին նրանից, մինչեւ անգամ իւր  
կինն ու որդիքը: Ո՞վ չէր զզւել. առաւօտից զուրս էր

գնում, մինչև երեկոյ փողոցներում ու գինեաներում հաղարմի շռալութեամբ օրը անցկացնում, երեկոյնան կատաղածի պէս տուն վերագառնում. էլ հայիոյնանք, էլ անեծք, էլ հարուած չեր մնում, որ չժամփւէր խեղճ կնոջ ու մօր վրաթ շուառ երեխաներն երկիւղից լեղապատառ. էին լինում: Խեղճե՞ր: Ի՞նչ օր ունէին, ինչ կեանք էին վարում. միշտ զաւ, միշտ տանչանք, միշտ չարչարանք: Ալր նրանք էլ Աստուծոյ ստեղծածներ էին, բայց ի՞նչ անէին որ էնպէս հօր ճանդերումն էին ապրում:

Ճար չկար: Միշտ լրում էին: Ամեն ինչ համբերութեամբ տանում էին:

Համբարձու մայրը—պառաւ Սալբէն արդէն քահանացին հրաւիրել էր: Դեռ կէսօր չէր լինիլ, որ քահանան եկաւ տունը օհրնեց:

Օհրնելուց յետոյ պառաւ Սալբին առաջարկեց քահանացին նախանաշիկ անել:

Բեր, բեր ողորմի քո հօրը, այեան բեր տեսնենք, ինչ ունիս ուտելու. պատասխանեց քահանան փափուկ գոշակին ծալապատիկ նստելով:

Տէր-աէրների համար մի և նոյն է. աղքատ, հարուստ ինչ օր լինի: Ոչ մէկին զիշում չկայ:

Ամեն տեղ էլ սրտերի խցնմանքը հանում են: Ամեն տեղ էլ անպատճառ պէտք է փորները տողնեն: Եթէ մի կերակուր, կամ մի որեկցէ ուտելու բան լինի, գոնէ պանիր հացն էլ հօ պէտքէ լինի, պաս օրերն էլ քացախում, կամ աղաչըում պահած կանանչեղէններ:—

Համբարձու տունը, ինչպէս ասացինք շատ աղքատ

էր, բայց Աստուծած ծեռնառատ մարդուն հասցնի: Բարեկամները ամեն ինչ բերել էին: Պառաւ Սալբին խոնչերից առած ծուածեղ, զաթա, պանիր, հաց զրած մի «սլոտնոց»-ի մէջ հետն էլ մի շիշ արաղ բերաւ եւ զրաւ քայանաչի առաջ:

Տէրտէրն ու տիրացուն մի մի բաժակ արաղ խմեցին, ապա սկսեցին ուտել նախ ծուածեղը և վերջապէս մնացածները:

— Այեան, արի էստէդ. կանչեց քահանան պառաւին: Վերջինս ներս մտաւ և ըստ սովորականին քընթկալը վերբարձրացնելով նստեց փափուկ գոշակի անկիւնում, տէրտէրից քիչ հեռու:

— Բա էս Համբարձին որտեղ է, ախր իսկի չի երկում. հարգուց քահանան:

— Քեզ մասաղ, այ տէր-տէր, դու չղիտես Համբարձու բնաւորութիւնը. իսկի միտք է անում թէ՝ ախր տուն ունիմ, տանս հաղար պակասութիւն կայ,—մարդ է մտնում, զնացող եկող է, է՛հ, ինչ զիտամ է՛, ու դառնար իմ ծնուած օրը, չորանար ինձ նմանի ծնողը, ախր ինչ՝ համար ծնեց ինձ լոյս աշխարհ զցեց է՛: Փչանա միանցամից Համբարձին, նրանով ես էլ աղատէր չեմ հօ՛: Պօչերս սպիտակած, աչքերիս լոյսը նուազած, ջանումս էլ հօ՛ ոյժ ու զօրութիւն չի մնացել,—ամմա ի՞նչ անիս ճար չկայ, էլի մի կերպ քարշ քարշ եմ լինում, խեղճ հարսս մատները պոկելով, աչքերի լոյսը թափելով, զիշեր զերեկ անքուն, անդարար նստում է, էս մարդու, էն մարդու գործը կատարում, համ վատ խօսքի է համբերում, համ հազար մի զրպարտութիւնների ու մի կերպ մեղ կառաւարում: Էղ փչացածը տանն էլ հօ՛ ոչինչ չի թողել: Եղ վատ չեղած

բոլորը զահրումար արաւ, ի՞նչ զիտամ է, տէր-տէր, դու հենց աղօթք արա, որ Աստուած ինձ տանի, միանդամայն ազատւեմ էդ անիմածիզը, էս անտանելի չարչարմունքիզը: Ես զիտեմ որքան ապրեմ, այնքան էլ սկ օր պիտի քաշեմ:

— Հա, զիտի, հա՛ բացականչեց քահանան, ծուածեղի մեծ թիքան բերանը կոխելով, ապա ժամմելով. հողիտ լոյս դառնայ, Աւանէս, մի ժամանակ քո առւնդ էլ առւն էր «Շօշվա-զալի» մէջ. — այեան, միտդ է գալիս մարդիտ ժամանակները:

— Հմծմ... ժպտաց պառաւ Սալբին, ապա դառնալով քահանալին. էդ ի՞նչ ես ասում, տէր-տէր, ամեն անդամ, որ միտ է ընկնում, քթիզս ծուխր քլրլում է. բա տէր-տէրը եկել է տունս մի ծուածեղ ուտելով բաւականացել է: Համբարձին ծնուած օրը, միտդ պէտքէ զայ տէր-տէր, դու նոր պատկած էիր, ողորմած հոգի տէր-Գրիգորի հետ էիր միշտ լինում, — նրա տիրազուն էիր, ախր, չէ:

— Հա՛, հա՛, զորդ է, աղբէր տեսնում ես պառաւ տեղովք ինչպէս բոլորը մաքին պահում է. միշտեց քահանան:

— Ե՛կ'կ', տէր-տէր, կարծում ես թէ ես պառաւ ե՛մ, զարդեն է ինձ պառաւազրել: Հա՛, էն էի ասում. Համբարձու ծնուած օրը տունս հենց կասէիր թէ մի ծով լինէր. էլ տապակած ու խաշած հաւեր, էլ զաթա, էլ իւղահունց, դառներ, զինի արադ. դէ, հիմա Աստուած մեղ էլ էս աչքով մտիկ տուաւ, է՛հ, ի՞նչ անիմ, փառք իրան. պառաւը հառաչեց և ուզում էր խօսքը շարունակել յանկարծ ներս մտաւ նրա անդրանիկ թոռը-Ռուբէնը և յայտնեց որ մայրիկը կանչում է:

Պառաւը խկոյն վեր բարձրացաւ և շտապեց հարսի

մօտ. Հուռի, ի՞նչ ես ասում քեզ մատաղ.

— Այեան, ասաց Հուռին. ախր չզիտես, որ խօսելու ժամանակ չէ, Մարգարիտի հետ մի էս տունը աեղը հաւաքեցէք կարզի բերէք, չէ որ մի սհաթիզ յետոյ սահամէրը կգայ, ամօթ է ախր սրանք, — զույց տալով բարեկամներին, — մերոնք են, սրանց մոտ զոնէ վնաս չունի, բայց սանամերը հօ՛ զիտես, որ ամեն ինչ պարող է:

Պառաւը ոչինչ չխօսեց՝ խկոյն տեղիզ բարձրացաւ, կանչեց Մարգարիտին: Դա խւր աղջկին էր: — Նրան ասաց, որ գնա հարեանի աանիզ մի երկու զորդ բերէ: Իրենց տանը չկար: Բոլորը զինետները կանել էին:

Կէս ժամիզ յետոյ պառաւի ու Մարգարտի աշխատութեամբ ամեն ինչ կարզի ընկաւ: — Ամբողջ յատակը ծածկել էր զեղեցիկ գորգերով, շուրջը փուել էին փափուկ դոշակներ: Սենեակի վերի կողմում դցած էր մի մահին: Նրա մէջ պառկած էր Հուռին: Նրան ծածկել էին իրենց տան մնացած վերջին միակ վերմակով: Երկու հին զրեթէ փշրւած աթոռներ զրել էին սենեակի մի անկիւնում:

Տէր-տէրը հազը կերաւ վերշացաւ ու քանի մի բերան օրհնելով զուրս գնաց:

— Հմմ... այեան, ասա տեսնենք, Երբ պիտի մկրտէք. հարզընց նա շէմքում կանգնած պառաւին:

— Տէր-տէր, քեզ մատաղ, հիմա ես ի՞նչ զիտամ, զրա համար զեռ միտք կանենք, կիսունք ու էլի ձեզ կասենք:

— Լաւ, լաւ, դէ մնաք խաղաղութեամբ. ասաց տէր-տէրը և կամեցաւ զուրս գնալ, պառաւ Սալբին ուզեց տէր-տէրի աշք համբուրել. տէր-տէրը ձեռքը զրաւ նրա զլիին և ապա հեռացաւ:

— Աղջի Մարգարիտ, դէ բեր, բեր մենք էլ մի կտոր



ՀԱՅՐԱՎԵՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
ԳՈՅ. ԹԱՅԱԿՈՒՄԱՆ

հազ ուտենք. ասաց պառաւր:

Մարգարիտը կրկին տունը սրբեց, սենեակի մէջ տեղ  
սփռեց կապոյտ սփռողը և Աստուծոյ տուածով ծածկեց  
նրա երեսը: Բարեկամներն ու պառաւր նստեցին ճաշելու:  
Մարգարիտը մնաց խոհանոցում: Հուռուռ համար իւղով  
շորւայ էր պատրաստում: Վերչապէս մի մեծ զաւաթ  
իւղալի՝ բրինձէ շորւան ձեռին ներս մտաւ և Մարգա-  
րիտը: Ամանը դրեց Հուռուռ առաջ: Ինքն էլ մի կտոր  
հազ մի կտոր պանրի հետ առաւ ու նստեց նրա մօտ:

— Աղջի բա էսպէս կրակ կլինի, էդ փչացածը սաղ օրը  
տուն չ'կաւ. խօսեց պառաւ Սալբին:

— Ացեան, ինչու չես Ռուբէնը ուղարկում որոնելու-  
ասաց մի կին:

— Աղջի խեղճ երեխան էսօր տասն անգամ ուղարկել եմ,  
մէյտան, բաղար տախն ու վրա է արել չի տեսել, մի կէս  
սհաթ էլ սորանից առաջ ուղարկեցի, տեսնամ խեղճ երե-  
խաս դոյնը թռած ներս մտաւ. հարցնում եմ. զտար.  
«գտա» ասում է, շերախանում. խմելիս. էնպէս հարծակ-  
վել է երեխի վրա, որ առանց մի ծայն հանելու դուրս է  
պղծել ու փախել:

— Փչանա չերիքնաղի մարզը. նա է զլխից տանում, էն  
օրը մեր մարզը ասում էր, չամբարծին մէյտանումը կան-  
դնած էր, չերիքնաղի մարզը եկաւ պատահեց, թելից բո-  
նեց, շերեխանան տարաւ, խօսեց բարեկամ կանանցից մէկը:

— չողը կոխեմ չերիքնաղի մարզը հա՛, աւելացրեց  
պառաւ Սալբին:

Դէսից դէնից խօսելով փորները կշտացնելուց յետոյ,  
Մարգարիտը սուփերն հաւաքեց ու կրկին տուն ու դո-  
ները աւելով եկաւ նստեց:

Գ

Օրը կամաց կամաց սահում էր դէպի երեկոյ: Ռու-  
բէնը շտապով տուն վաղեց և պառաւին հաղորդեց սա-  
նամօր զալը: Պառաւն էլ իսկոյն հաղորդեց ամենքին:  
Այս լուրը մի տեսակ աղղեցութիւն ունեցաւ ամենքի վրա:  
Բոլորն էլ սկսեցին իրենց շորերն ուղղել: Որը քրնժկան  
էր վեր բարձրացնում, որը արխալուզի փէշերն էր առաջ  
քաշում, որը չարզաթի ժայրն էր ուղղացնում: Եւ այս-  
պէս ամենքն էլ սկսեցին սպասել սանամօր ներս մտնելուն:

Սանամէրը մի շան հարուստ ու պատւական մար-  
դու կին էր: Նա այն ժամանակ բարեկամացաւ համբարձու  
հետ, երբ վերջինս էլ իրեն համապատասխան կարի ու  
հարստութեան տէր էր:

Զնացելով, որ համբարծին ընկել էր այդ ողբալի  
զրութեան մէջ այդ անկարգ մարդկանց շարքը, սակայն  
իբրև կնքահայր նա բողորովին չի անշատուեց:

Էն սկզբից մէռոն են տարել ու բերել, միմեանցից  
հեռանալ անկարելի է:

Վերչապէս սանամէրը եկաւ: Դա միշին հասակով մի  
կին էր: Ճակատին առատօրէն ոսկի ու պոլիմագերեալ և նրանց  
միշից նիշտ քթի վերև մի իմպէրեալ, որ տեղեկան բառքա  
ռով ասում է «մէշանոց»: Այտերի երկու կողմով սև մազերի  
վրա շարւած էին ոսկի բոժոժներ: Հազլաւծ էր Ղարաբաղի  
նաշակին համածայն ամենաճոխ կերպով: Կարմիր թաւշեա  
քուրք, կանաչ միտաքսէ արխալուզ, իրաքանչիւր թերից  
կախուած բաղմաթիւ երժաթէ կոճակներ, գլուխը ժածկած

պարսկաստանի կարմիր չարդաթով, պարանոզից կախած մեծ ոսկի կոնակ, մատներն լի թանգագին մատանիներով և ոտներին կանաչ կոշիկներ:

Երբ ներս մտաւ բոլորն էլ տեղերը կանգնեցին:  
Ասենքին բարի օր մաղթելով, առաջ գնաց հուռու ձեռքը սեղմեց, որ այդ ժամանակ նշտել էր անկողնու մէջ, և մի թաշկինակում փաթաթած քանի մի կանֆէտներ և այլ քաղցրեղէններ կոխեց բարձի տակ ու երեք անդամ մէջքին հանդարդ խփելով ասաց «մէջքդ կանաչ մնա, բարով միշտ բարի ծնունդ ունենաս, Է՞ն ինչ անենք, Աստուած սաղ պահի Ռուբէնն ու Տիգրանը, ապա գառնալով պառաւ Սալբուճ—այեան, աչքդ լոյս, բարի աստղի, բարի սհաթի լինի. Ի՞նչ անենք, Աստուած երկու տղայ է տուել՝ թող էս մէկն էլ աղջիկ լինի:

— Է՛է՛, Ասու, Համբարծին էլ է տղա, ... բան չունիա, դրա համար ովէ է դարդ անում. նստի քեզ մատաղ, նստի:

Սանամէրը մնացածներին էլ ձեռք սեղմելով, ամենքի քէփը հարցնելով, բաղմեցաւ սենեակի վերի կողմում, փափուկ դոշակի վրա:

## Դ

Մկրտչի խանութը գղրդում էր մեղ. արդէն ծանօթ լոթիների ծայներով. բաժակների չխչխկոցը խառընւելով նրանց խոպոտ ծայների հետ, մի զղուելի ներդաշնակութիւն էր կազմում:

— Մանաս, գոռաց Սարգիսը, աղա մի լոււ երդ ասա, ա՞ քոռակ, ինչ ես ուներդ իրար վրա կիտել, տօ, խալիք քեզ համար են քէփ անում ախր, չասացի, որ միաք

չանե՞ս:

Սանասը բաւականին համեստ տղայ էր, նա այնքան էլ չէր խմում: Նա ամենքի զատարկ բաժակներն էր լրեցնում:

— Քէփդ ուրախ պահիր, Սարգիս, դրա համար բոլորովին միտք չեմ անում. ասաց նա ժպտալով:

— Օ՞հ, ես քեզ մատաղ, դէ մի լաւ սկսիր, հրե՛. դռուաց Սարգիսը մի չերծ զրկելով Մանասին:

Վերջինս սկսեց.

Մատաղ ինիմ աչքերին,

Կեռ կեռ կամար ուներդին,

Վարդի նման թշերին,

Բալամ, բալամ, այ բանակամ:

Պահ, պահ, պահ էքփերիմ, ուռա, ուռա... գոչեց Սարգիսը: Բոլորն էլ միաբերան գոչեցին ուռա:

Մանասը շարունակեց.

Սիրտս դառել է եարա,

Արի խղճա ինծ վրրա,

Էս վերքերիս դեղ արա,

Բալամ, բալամ, այ բանակամ:

Պահ, պահ, .. գոռազին լոթիները: Տղերը ամեցէր,

Մանասի կենազը:

Մանասը ինքը ամենքի բաժակը լրջրեց:

— Մանաս, քօ կենազը, ա՞ քոռակ, հարսանիքումդ մի տես, ինչ քէփ ենք անելու է, զոռաց Մելքիսէթը:

Բոլորն էլ կրկնեցին միւնոյնը:

Մանասը անոյշ ժպտար բերանին ամենքին էլ համեստութեամբ զլուխ էր խոնարհեցնում, ՚ի նշան խորին շնորհակալութեան:

Ոչ մի մարդ իրան այնքան երշանկութեան մէջ չէր  
դանել և այնքան ուրախ չէր լինել, ինչքան որ Մկրտչի  
դինետան հաւաքւած յօթիները:

Մելքիսէթը իսպառ թուլացել էր: Թախտի մի ան-  
կիւնում պառկած իւր խոպառ ձայնով զոռում էր, չած-  
բարձին անդաղար պար էր գալիս: Առաքելը երկու  
մատներով «չըթմա\*» էր խփում: Խորամանկ Մկրտիչն էլ  
յանախ մօտենում էր սփռողին խորոված մսի թիբաները  
անոյշ անում ու կարծիր զինին խմում: Համբարձին, որ  
երկու ժամ առաջ թուլացել-ընկել էր ու տնքում էր  
հազար տեսակ մտքերի տակ, որ անդաղար վարանում էր  
և որ մի րոպէ հանգստութիւն չէր զտնում: Նա այժմ  
կարծես ընկել էր մի ուրիշ աշխարհ միաբր, հոգսր, այդ  
բոլորը նա մոռացել էր. մոռացել էր տանը թողած ծն-  
նդիան ամուսնոյն, մոռացել էր և քաղցած, մարտ դա-  
ւակներին, չէ որ նրանց այբովէս էր թողել ու զուրս  
դնացել, Բաքոսի սիրով յափշտակւել էր և խորին անձ-  
նւիրութեամբ նրան էր երկրպագում:

Այնտեղ-տանը կինը քաղցից պիտի մեռնէր, եթէ  
բարեկամների օգնութիւնը չհասնէր: Այնտեղ մայրը տո-  
չորդում է, տանջվում-չարչարում է անհամար վշտերի  
տակ, իսկ այստեղ զինետան մէջ ինքը հրճում է իրն-  
դում ծիծաղում է ու պարում:

Օրը բաւականին անցել էր: Կէսօր էր: Մարդիկ  
շտապում էին տուն: Իւրաքանչիւրի ծեռքում մի թաշ-  
կինակ լի ամեն տեսակ բարիքներով: Ամենքի կանայքն էլ,  
մայրերն էլ, որդիներն էլ սպասում էին իրենց ամու-  
սիններին, որդիներին ու հայրերին, որ գան և իրենց հետ

\* ) Տրաքեցնում է:

միասին մի սփռողի վրա նաշեն:

Շատերն անցնում էին Մկրտչի խանութի առաջեւ:  
Նրանք ծիծաղում էին լսելով, հեռանում:

— Արբեցողներ: — Ի՞նչ կեղտոտ անուն: Բոլորն ատում  
են նրանց, բոլորն էլ արհամարհում:

Սակայն նրանցից իւրաքանչիւրը ինքն իրեն մի  
իշխան է համարում:

Համբարձին դեռ շարունակում էր պար: Մնացած-  
ներն էլ իրենց անտեղի զոռցները.

Այդ միջոցին ներս մտաւ մի փոքրիկ տղայ և կա-  
մեցաւ մօտենալ նրան:

Վերշինս այնպէս ահեղ ձայնով զոռաց, որ խեղճ  
տղան մնաց տեղն ու տեղը սառած:

— Դուրս գնա, կորիր շան որդի, շարունակեց իւր գո-  
ռոցը համբարձին:

— Խեղճ երեխան արտասուքն աչերին հեկեկալով դուրս  
գնաց:

Դա Ռուբէնն էր, — Համբարձու որդին:

## b

Սանամէրը և իրեն շրջապատօղ կանայքը զբաղել  
էին մեղմ ու բարակ զրոյցներով:

— Աղջի Սառա, խօսեց սանամէրը, զորդ լաւ միտս ըն-  
կաւ. Սհակենց աղջիկը տալիս են Օհանենց տղին:

— Սանամէր, քեզ մատաղ, ճշճարիտը չգիտեմ, բայց ա-  
սում են. — իմ խելքս էլ իսկի չի կարում թէ նրանք տան:

— Աղջի լաւ, լաւ ի՞նչու չեն տալ, իրենք շատ լաւ են:  
— Սանամէր էդ մի ասիլ, իրենց հետ ի՞նչ զործ ունես.

Դու աղջիկը պարիր. նախշուն, ծեռքաշրով, շնորհքով. բա  
նա Մանասին սաղ կրա:

— Սառա, թէ գեղեցկութիւնն ես պարում, Մանասը  
էն աղչկանից գեղեցիկ է, ես իմ Աստուածը նրա նման  
գեղեցիկ աղայ չի լինիր:

— ԷՇԵ, Սանամէր, աղին ի՞նչ գեղեցկութիւն, աղի  
գեղեցկութեանը չպիտի մաիկ տաս, աղի բնաւորութիւնը  
պարիր:

— Աղջի փող, փող, թքես գեղեցկութեան վրա. միշա-  
մտեց Անոյշը:

— Հա, Անոյշ բաշի, հենց էդ ասի, էս շատ էլ գեղեցիկ  
տղայ, երեսին հօ վլաւ չեն ուտելու. որ ծեռքին զորձ  
չլինի՞, աշխատանք չին՞՝, ախր ի՞նչով պիտի կնիկ պահի,  
ասաց Սառան:

— Շատ լաւ սանամէր. բա որ փող լինի, ոչ խելք, էն  
ժամանակ ի՞նչպէս անենք: Մանասը էս սհաթին էլ, ով  
զիտէ, որ շերախանում է պառկած. է՞հ մի թող գնա ե՞.

— Սառա, դէ կտեսնես՝ թէ Մանասը էն աղջիկը  
չսարանւ:

— Իրանք են իմանում, սանամէր, թող չի ուզողը հենց  
ես լինեմ, չի ուզողի աչքը քուանա, ամմա ես նրանց  
խօսքն ևմ ասում:

— Աղի, զիտում չէք է, ասում են աղչկայ մօր միտքն  
էլ է Մանասին տալու. միշամտեց Անոյշը:

— Իմ կողմից շնորհաւոր լինի, Անոյշ բաշի, ասաց մի-  
ժաղելով Սառան:

— Աղջի Մարգարիտ, ծեր հարեան Խասադիլի աղից  
ի՞նչ խաբար կայ:

— Խաբարը որաեղից է, Սանամէր, փչանա նրա մայրը

խեղն աղի հետ էնպէս վարւում է՞ր, որ հիմա էլ նա  
մայր միար զզի՞:

Պառաւ Սալբու հիւրերը, ինչպէս սովորութիւն էր  
Շուշու կանանց, իրենց կեղտերն ու զարդերը թողած,  
ուրիշներու վրա էին խօսում, բամբասում, ուրիշներին  
էին սուտ թէ նիշտ մրոսում ու հաղար մի կեղտ բար-  
դում:

Պառաւը մի բոպէ գապար չունէր: Հիւրերը շատ էին  
թախանձում, որ քիչ նստէ ու զրուցէ: Խեղճը չէր  
կարենում: Տան ամեն հոգսերը իւր վզին էր բարդւած-  
իրեն էր մնացել ամեն կարգադրութիւնը: Ի՞նչ սիրտ ունէր  
խօսելու: Խեղճի զարդերին ու սիրտ մաշեցնող մաքերին  
թիւ ու համար չկար: Գոնէ հարսը առողջ ժամանակ  
ինքը քիչ աղատ էր լինում, այս ու այն զործերը կատա-  
րելուց: Նրա պառկելուց յետոյ բոլոր զործերը իր սեպհա-  
կանն էր զարծել: Քուլա քուլա զոլորշին վեր սլանալով  
թշթշալով ինքնաեռը բերաւ պառաւը և զրաւ հիւրերի  
մօտ, սենեակի մի անկիւնում:

— Մեծ սանամէր, ախր մի քիչ էլ դու եկ նստի խօսի  
է, մէջըդ զուրս է զգւել էնքան բան ես արել, ա քո հէրը  
մեռնի համ, ասաց սանամէրը:

— Սանամէր Սառա, քեզ մատաղ զուք համ ասեցէր,  
համ խօսեցէր. դէ իմ հալս հօ տեսնում էր. ախր ես որ  
նստեմ, տանս զործերը ով պիտի կատարի. պատախանեց  
զառն ժպիտով պառաւը և վերջազրեց խօսքը մի խորին  
հառաջանքով:

— ԷՇԵ, խեղն կնիկ, չորանա քո բերողը, ինչպէս որ  
հենց չորացել է. ասաց հառաջելով սանամէր Սառան, ապա-  
շարունակելով. իր մարդի օրօվ մի քանի տարի լաւ-

կեանք վարեց՝ վայելչութիւն բաշեց, հիմա ընկաւ էս վիճակի մէջ. ախ, ախ բէղասրլ տղաց, բեղ թնչ ասեմ, որ սիրաս հովանս է:

Հուռին, որ ամբողջ օրը լուռ նստած էր, Սամամօր վերջի խօսքերը լսելով մի խոր հառաջեց:

Մարգարիտը նստեց ինքնաեռի մօտ և սկսեց թէյ պատրաստել:

Այդ միջոցին Ռուբէնն ու Տիգրանը աղաղակելով ներս վաղեցին. այեան, զոչում էին նրանք, հայրիկը գտիս է, մեղ հայոյում է, մեծել է ուզում, ինձ ասում է. «Ի՞նչու այսօր եկար ետելից» այս խօսքերը Ռուբէնը դեռ չէր վերջացրել՝ յանկարծ ներս մտաւ համբարձին:

— Ճմմմ.. շան տղերը, գոռաց նա:

Հիւրերը—բոլորը տեղերը կանդնեցին:

Համբարձին խրտնած եղան պէս մնացել էր մէջտէզր կանդնած, աչքերը ճպճպելիս ու երբեմն զլուխը թափհարելիս:

— Կնքահէր, բարով, աչքդ լոյս, ախը մենք եկել ենք, որ դու քախչես, ասաց սանամէրը մօտենալով համբարձուն:

— Բօ, էս ով է. ասաց խօժորադէմ համբարձին, ապա խոմփալով. հմ'մ'մ'... բարով, բարով. ապա դառնալով զառամեալ կնոշը. էջ շան ազնիկ, վեր կաց էլ տեղերից, վեր կաց, կորի, հեռացիր էս տեղից՝ թէ չէ զլուխդ կշարդեմ, վեր կաց, ես եմ պառկում այդտեղ. հմ'մ'մ'... կրկին խոմփացրեց:

— Արի է, արի, արի դռանը թախտեն պառկիր. այս ասելով պառաւ Սալբին մօտեցաւ բռնեց որդու թէրից և կամեցաւ դուրս բաշել:

Վերշինս փորձեց դիմազրել և ուղեց բռունցքով մի

լաւ հարոււած տալ թշւառ կնօշ, սակայն զինին նրա մէջ չէր թողել: Նա խսկոյն վայր լինկաւ:

Անոյշը մի բաւականին բաշ կին էր, պակաս չէր և Սալբունց Սառան:

Երկուսից մէկը ոտներից բռնեց, միւաք ուսերից և քարշ տալով մի կերպ տարան թախտի վրա վայր դզեցին:

— Մէլքիսէթն ու Առաքելն մի օր թաղեմ հա, գոչեց պառաւ Սալբին. ախ. Ասատուած կամ ինձ տար, կամ էս անիմածին էլի՛, էլ որ օրւայ համար ես պահում. աւելացրեց նա:

— Համբարձու տեղ մի սև քար ճնէիր Մարկոսեանց Սալբի. շշնչաց վերմակի մէջ փաթաթւած հուռին:

— Խեղճեր, խեղճեր. հառաջեց սանամէրը. աղջի նստեցէր՝ էլ ի՞նչ էք կանդնել աւելացրեց նա:

— Ես հմ աղբօր տնից էի զգուած, էս հօ նրանից առաւել է:

— Վույ, Աստուած, «Պեափուրին» տղան, կամ մարզը բէղասլ կամ արբեցող չլինի. խօսեց Սալբունց Սառան, վույ սատանին ականչը խուլ մնա, մինչև օրս մարզիցս չեմ տեսել. այսուհետեւ էլ էն օրը Աստուած ինծ մահ տա. որ նա հարբէ: Վայ ծեր օրին հուռի, Սալբի-բաշի, վայ ծեր օրին այ խեղճեր, այ անմեղ գառներ, խալխի երեխերը աչքները բանում են հօրանց փառքերը տեսնում, ուրախ ապրում ու մեծանում, դուք ի՞նչ էք տեսնում, ծեր հալն ի՞նչ է այ խեղճ բալէք:

Հուռին անկողնի մէջ լաց էր լինում: Երկու երախաները տեսնելով մօրը իրենք էլ սկսեցին արտասուբները թափել:

Սանամէրը նկատեց և իսկոյն բարկացաւ չուռու վրա.— Աղջի սուս կաց դուեց նա. էս խեղճ երախանէրի սրտերը դու էլ մի կողմից մի՛ չարդիր, բօ սրանց դու պէտքէ միսիթարես, դու պէտքէ սիրա զնես, ուրախագնես, փառք Աստուժոյ ի՞նչ կայ տղերը են. մէկ էլ տեսար մեծացած ու ամեն մէկը մի երեելի գործի աէր զառած, ապա ձայնը մեղմացնելով, սուս չուռի, սուս քեզ մատաղ՝ հիմա մենակ քո մարդու չի էղպէս, հարիւրաւորներ կան, բա նրանց կնկախըր ի՞նչպէս են անում՝ սուս, իսկի զարդ չանես. ես չեմ թողնել մի բանի նեղութիւն քաշես, Տիգրանը իմն է, իմ երախաս կհաշւեմ, Ռուբէնին նմանապէս չեմ թողնել, որ նեղութիւն քաշէ. այսպէս սիրա էր դնում սանամէրը:

Նա զաւակ չունէր: Ծնւածը մեռնում էր: Զաւակները չէին ապրում: Նա բաւականին բարեսիրտ կին էր: Պակաս չէր նրա տանից և հարստութիւնը:

Յիրաւի, այդ սանամէրը քիչ չէր օգնում այդ խեղճներին: Գրեթէ ամեն օր եփած կերակրից, կամ ուրիշ ուտեիլիքներից, մի խօսք ամեն պեսակ կենսական պիտոք-ներից բաժին էր ուղարկում նրանց համար:

Հինդ օրից յետոյ մկրտեցին նորածին մանկան:

Այդ հանգէսին ներկայ էին ծնւած օրը և կած հիւրերը: Քահանափ հետ ճաշեցին կնքահալըր և չամբարծին: Վերինս այդ օրն էր միան, որ բացառապէս զինեառն չէր զնացել: Չարբած ժամանակը համբարծին մի վերին աստիճանին դադար էր: Այս օրը մի էլ անընդհատ բարեկարգ տաշումն էր առաջին անընդհատ բարեկարգ տաշումն էր: Եթու առաջին անընդհատ բարեկարգ տաշումն էր առաջին անընդհատ բարեկարգ տաշումն էր: Մասսան առաջին անընդհատ բարեկարգ տաշումն էր առաջին անընդհատ բարեկարգ տաշումն էր: Համար առաջին անընդհատ բարեկարգ տաշումն էր: Եթու առաջին անընդհատ բարեկարգ տաշումն էր:

Ե այդպէս համեստութեամբ խօսում էր հիւրերի հետ, օգնում էր պառաւ մօրը, մասնակցում էր անային հողսերին և ամեն, ինչ կարդի էր բնըում: Ամենքն էլ մնացել էին զարմացած և այնպէս տեսնելով խնդրում-ուրախանում էին:

— Երանի՞ թէ միշտ այսպէս լինէր չամբարծին. ասում էին ամենքը:

— Հաղար երանի՞:

Միւնոյն փողոցի վրա ընկած էր Սհականց Սիմոնի տունը: Սիմոնը մի կոշկակար մարդ էր: Նրա ընտանիքը շատ մեծ չէր: Ինքն էր՝ իւր կինը—Զաւահիր-բաշին և միակ աղջիկ—Սաթենիկը:

Սիմոնը երկու հարիւր բուրգի կանխիկ փող ու մի հարիւր ցիսուն բուրգու էլ բաժինք էր պատրաստել իւր աղջկայ համար: Աղջիկը արդէն մեծացել էր—տասն ու չորս տարեկան էր:—Շուշեցու սովորութեան համաձայն պատկելու ժամանակիցն էլ ըիչ անցել էր:

Շատ տեղերից առաջարկում էին, սակայն ոչ մէկը Սիմոնի «բէֆով»-ը չէր,—ոչ մէկին չէր հաւանում:

—Մի աղջիկ ունեմ պէտքէ էնպէս մի տղի տամ, որ համ փեսա լինի ինձ համար, համ էլ իբրև հարազատ տղայ ասում էր այսպէս Սիմոն ապերը:

Մանասը վաղուց էր մտաղը Սաթենիկին կին առնելու, նա առաջարկել էր, սակայն մի վճռական պատասխան չէր ստացել:

Զաւահիր բաշին հաւանում էր Մանասին: Սաթենիկն էլ նմանապէս: Այդ գէպը ում Սիմոն ապերն էր խոչնդու: Նա չէր համաձայնվում: Բայց յոյս կար որ Զաւահիր բաշին անպատճառ նրան կհամոզեցնէ:

Երեխայ ժամանակը Մանասը ըիչ անդամ չէր գնացել նրանց առւն: Զաւահիր բաշին ըիչ անդամ չէ նրան այլ և այլ գործի ուղարկել: Նա, ինչպէս ասած «խամ» չէր նրանցից—ոչ Զաւահիր բաշուց, ոչ էլ Սաթենիկից: Նա այժմ էլ կարող էր նրանց մօտ գնալ, եթէ այդ առաջարկութիւնը արած չլինէր: Սիմոննք հենց չէին բնդունել իրենց մօտ գնալ:

Սաթենիկն էլ կարծես մի բան հասկանում էր:

## ՏԱՐ ՍԵՐ

Զ

Շուշու վերին թաղի լայն փողոցներից մէկի վրա ընկած էր մի միյարկանի տուն: Դա Օհաննենց տունն էր: Այդտեղ էր լինում նրանց տղան-մեղ արդէն ժանօն Մանասը:

Մանասը միշին բոյով մի երիտասարդ էր. գեղեցիկ դէքով, սև վառվուուն աչքերով, մեծ ու երկայն թերթերունքներով, ժպտալից հայեազբով, կամարակապ ունքերով, լայն հակատով, գեղեցիկ բարակ քթով, աչ ու ծախ ոլորած բարակ թուխ բեխերով: Նա սովորաբար հազնում էր արիւալուղ. մահուղէ չուխա, զլուխը ժածկում էր կոլոր մորթէ փափախով, մէջքին երծաթէ զօտի, զօշի վրայով կախած ժամացոյցի հաստ երծաթէ շղթայ, ծայրեն պլնդացրած երծաթէ ժամացոյցը դրած ժողի փոքրիկ գրպանում: Հասարակ օրերը հազնում էր Զուղեցի թուրքերի սովորական «չմոշկներ», իսկ տօն և կիւրակի օրերը եւրոպական կօշիկներ: Մանասի բնաւորութիւնը բաւականին համեստ էր, սակայն նա ունէր մի կեղտ, որ զրեթէ նոր էր սկսել տիրել նրան: Դա յանճախ զինետուն գնալն էր: Նա շատ չէր խմում: Այդտեղ գնում էր թուղթ խաղալու:

Նա՛ որ շատ անգամ էր Մանասի հետ խօսել ծիծաղել, այժմ միանդամ էլ չէր կարենում և այժմ այդ թւում էր: Այս, այժմ նա փափագում էր Մանասի հետ կըկին ծիծաղել, մինչեւ անգամ ամբողջ ժամերով մէկտեղ լինել: Սակայն դարաբաղի անբան զրաստանման աղջիկը, չէր կարենում յագեցնիլ իւր սիրոյ ծարաւը: Նա զրաստի էր նմանվում, պատճառ ազատ կամք, ազատ իրաւունք ընաւ չունէր: Մեծ խայտառակչութիւն կինէր նրա համար, երբ համարձակօրէն յայտնէր հօրը իւր բաղձանքը: — Ոչ: Ինչպէս հայրն է ուզում: Հայրը իւր կամքի համաձայն է և ում հետ որ ցանկանա, պսակելու, այդ ինքը զիտէ, այդ իւր իրաւունքն է: Թէւ աղջին էլ չսիրէ հօր ընտրած փեսալին, նար չկայ, ընդդիմանալ չէ կարող, պիտի ստիպւած համաձայնւի, թէւ երշանկութիւն էլ չտեսնէ, ուրախութիւն էլ չդանի, այնու ամենայնիւ պիտի հնագանդւի հօր ընտրած վիճակին:

Այգպէս էր և մեղ ծանօթ Սաթենիլի նա սիրում էր մէկին, — նա սիրում էր Մանասին, սակայն յայտնելու իրաւունք չունէր, մինչդեռ հայրն էլ համաձայն չէր Մանասի առաջարկութեան: Սաթենիլի սիրաբորօք սերը չարդում էր շնորհիւ հօր Խոչնդոսութեան:

Սաթենիկը սիրում էր: Բայց ի՞նչ անէր, ինչպէս յայտնէր իւր գաման հօրը: Եթէ ասէր անպատճառ հայրը կանիծէր նրան, ասելով թէ՛ «աղջիկը» անբարոյականացել է, որ համարձակւել է սէր ծգել ուրիշ տղացի վրա:

Որքան տանշվում էր Մանասը. անքան և գեռառաւել Սաթենիկը: — Կրակի նման ալրվում էր:

Սէրը երբոր մէկին իրեն նանանչաղնում է, էլ դադար

հանգստութիւն չէ տալիս, աչքերից երկար ու շարունակ քուն է խլում, առղորում է սրտերը, ինչպէս կիղող արեր ամառը այրում բորբոքում է կանանչ ծառերին, գեղարդոց ծաղիկներին ու թաւշանման խոտերին. աղքատութիւն չէ այդ գործի աշխատանքի անաշողութիւն չէ, որպէս զի մի կերպ առաջն առնել կարելի լինիր: Ոի փառք, մի պատիւ կամ մի շքեղութիւն չէ, որ առանց զրանց ապրւի:

Աղքատ, հարուստ, ծառայող, առեւտրական, մշակ, անաստններն անդամ՝ բոլորին էլ միատեսակ տիրում է այդ գաւը, բոլորն էլ սէր ունեն, զա մի ընդհանուր աղտ է, որ ամեն կարգի շնչաւոր էլ վարակւում է զրանով:

Սաթենիկն ու Մանասը աննկարագրելի կերպով փոխարձաբար սիրում էին միմիանց: Սէրը ազատ կերպով մտել էր երկու նազելիների սիրար և հրոյ մարակը ձեռին տանջում տողորում էր այդ ընքոյշ էակներին:

Ո՞վ պիտի յաղթէր սիրոյ այդ անգութ և գաման թագաւորներին, ո՞վ պիտի երկու վառւած սրտերի կրակը հանդշեցնէր, եթէ ոչ սիրահարները միմիանց:

Բայց Մանասն ու Սաթենիկը ազատ չէին և չէին կարենում, ուստի և շարունակ տանշւում էին:

Այստեղ Սիմոնն էր մեղաւոր, այստեղ նա էր այրում փոթութում երկու մատաղ սրտերը:

Սիմոնը քիչ իւր ասածի մարդ էր: Կամ նրան մի գործի մէշ յամողագրած, կամ մի հասա երկաթ կուպրած, միւնոյն էր:

Սակայն Զաւահիր բաշին եթէ իւր բոլոր ոչժը հաւաքէր և նիդն թափէր, անպատճառ մի կերպ կհամողեցնէր ամուսնոյն:

Նա իւր կախարդիչ խօսքերով կարող էր հասկացնել,  
որ չպէտք էր իրենց աղջկան հալումաշ անելու պատճառ  
դառնալ: Նրա խօսքն էր միայն ըիս Սիմոնին մեղմացնում:  
Եթէ երեմն մի թեթև համեստութեան կամ աղնուու-  
թեան նշոյլ երեւում էր Սիմոնի մէջ, այդ պէտք էր հասկանալ,  
որ Զաւահիր-բազու շնորհիւն էր:

Զաւահիր-բազին, ինչպէս ասացինք, սիրում էր Մա-  
նասին, սակայն նրան էլ չէին թողնում իւր մաքի մէջ  
հանգարտ մնալ: Ղարաբաղի վայրահաչ կանանց անտեղի  
և վայր ՚ի վերոյ խօսքերը միշտ վհատութեան էին են-  
թարկում խեղճ կնոյք:

«Էհ, Աստուած, Աստուած, ինչ էլ որ կլինի, կլինի:  
Եթէ Ասթենիկիս բաղդր լաւ է, ամենավերջին աղքատի,  
կամ հենց մի իմաստակի էլ տամ, նա միշտ երշանիկ ու  
բաղզաւոր է լինելու, իսկ եթէ հենց այժմանից բաղդր  
ու քարին է զրած, իշխանի որդու էլ տամ, նա բոլորովին  
կեանք չի վարելու, նա միշտ գմբաղդ է լինելու. ասում  
էր Զաւահիր բազին իւր մտքումք: Նա էլ այս խօսքին  
էր համոզւած, նա էլ աղջկայ բաղդի ապագան թողնում էր  
ճակատագրի վճուին:

—

Ի՞ն մոյմ նու  
հույսու ով նիսիդ



— ու ու զեյր զոյր ու ու Այլ  
զիմբրինումք բոյմ մի ուստար

## Ե

Ամառային պարզ օրերից մէկն էր: Այրող արեգակը  
մօտենում էր արեւմտեան հորիզոնին, իւր սքանչելի ճա-  
ռագայթները փուելով թաւշապատ լեռների գագաթներին,  
թաւաղարդ անտառներին ու ծաղկափթիթ հովիտներին:  
Նուագածայն թուչունները իրանց անոյշ դալայիկներով  
արեկի վերջի հրաժեշտան էին երգում: Հովասուն գեփիւռ-  
ները մեղմ ու անոյշ վղղոցով ծառերի կանաչ տերենների  
վիւթիչ սօսափիւնի հետ մի աղդու, մի ողեօրիչ ներդաշնա-  
կութիւն են կազմում: Բուրալից ծաղիկների գալար թփերը  
հանգարտ երերմունքով կարծես ասում լինեին արեին.  
«Չուտով մայր մտիր, որ ազատւենք քո այրող, քո կիզող  
ճառագայթներից»:— Օրւայ այդ պահուն սքանչելի է  
Շուշին:— Բնութիւնը իւր բոլոր հրաշալիքները կարծես  
պարզեել է այդ սարի գագաթին ընկած գաշտավարերին,  
բարաշէն տներով պահուելած ծորերին ու բուրներին,  
նրա շուրջը պատաճ ապառաժով լեռներին ու ծաղկահիւս  
գորգերով զարգարւած տափարակներին: Եկեղեցիների  
գմբէթներից զանգակները ներդաշնակ զօղանչիւնով բար-  
պաշտ մարդկանց ժամ էին հրաւիրում:— Ծերունիները  
զլուիները տմտմբացնելով ձեռքերին գաւազան եկեղեցի  
էին շտապում: Իսկ երիտասարդ տղերքն ու աղջկերը  
ժպտախտոն զրոյցներով ընթանում էին ճեմելու դէպի  
բաղաբից գուրս ընկած գաշտերը:

Ոմանք ինքնաեռը զրած տան հանդէպ, ընկած ժա-  
ռախիտ այգու մէջ թէյ էին վայելում:

Շատերը երեկոյեան հազկերոյթի պատրաստութիւն  
էին տեսնում: Առ հասարակ արհեստաւորի կամ վաճա-

ուականների կանալքն ու մայրերն էին այլպէս վաղ հազ պատրաստում: Յողնած վաստակած արհեստաւորը տուն գալուն պէս ընթրում էր և խոյն պառկում: Բնութեան զիշերային սքանչելիքը վայելում էին նրան քնած ժամանակ. երբ պառկում էին տան կառւրներին, կամ պատշաճ կամբներին աստղադարդ շուրջառազգեստ երկնքի սաւերում:

Սուաւօտեան զարթնում էին նրանք այն պահուն՝ երբ դեռ բնութիւնը ներհած էր խորին անդորրութեան մէջ, երբ ծիծառներըն ու սոխակները թնդացնում էին օվար իրենց քաղցր մեղեղիներով, երբ արեւելեան հորիզոնը շառագունած թույ նուազ շողերով գուշակում էր արեւի փութով ծագելուն, երբ լաւում էր աղբիւրների անոյշ կարկաչիւնը, քաղաքային հուիւի սրինդի դաշացիկը, մեղծասուն զիփիւռների վզզոցը, երբ օվար բուրում էր հազարերանդ ծաղիկների հոտերով:— Ահա ինչ էր վայելում առաւօտեան վաղ զաթնողը:

Սհակենց Սիմոնը ժամ է զնացել:

Զաւահիր-բաշին ճեմում էր իրենց տան առաջ ընկած այգու մէջ:— Մի ափսէ ծեռին կանանչեղիններ էր հաւաքում, երեկոյեան սփոռոցը նոխացնելու համար:

Սաթենիկը ինքնաեռը կրակ դզեց, զախաւելով բազն աւելեց, ապա մի կուլա չուր առած սկսեց սրսկել բազի երեսով: Այս բոլորը կատարելուց յետոյ մաստակը բերանին, հրեշտակային ժպիար շրթունքին զիմեց այգի մօր մօտ:

— Մայրիկ, խօսեց Սաթենիկը, տեսնում ես իմ զանած ծաղիկների սերմերը ինչպէս անել են. նրանք շուտով կմեծանան և կծաղկեն՝ այնպէս չէ:

— Ի հարկէ բալաս, կծաղկեն և կսկսեն իրենց անոյշ բուրմունքը սփուկ այգու շուրջը, այնուհետեւ այդին էլ տեղի կշեղանայ, աւելի կպայծառանայ, Աստուծոյ օհրնութեամբը քեզ էլ կպսակենք, վեսան կզայ քո վարած ծաղկիների մոտ, այդ կանաչ խոտերի վրա կնսաէ, սերով թէյ կխմէ. ախ, երանի էն օրին, Զաւահիր-բաշին աշերը երկինք ուղղելով. քեզ եմ գոչում, այ Աստուծ, Դու երեխիս իր մուրազին հասցնես, Դու ինձ էնքան կեանք տաս, որ երախիս մի լաւ հարսանիք անեմ մի սիրուն վեսայ հարեմ այնուհետեւ մեռնեմ՝ հանդիստ և առանց մի գարդի:

Մօր խօսքերը Սաթենիկի միտքը շարժեց. ախ, ի՞նչ անեմ, թէ ասեմ մօրս, գուցէ նրա բարկութիւնը շարժեմ, հաբա ի՞նչ անեմ, ուրեմն լաւն այն է, որ լուեմ. մտածում էր Սաթենիկը:

— Սաթենիկ, որ ինձ գրուստը չասես է, քեզ հետ էլ չեմ խօսալու, Մանասի հետ, որ պակենք կհամաձայնւիս. հարզը մայրը:

Սաթենիկը ժպտահայեաց աշերը յառած էր կանաչ խոտերին. յանախ կունում էր քնքոյշ մատներով պոկում դալար խոտերը, փուռում այս ու այն կողմը առանց մի խօսք արտասանելու:

Մօր հարզը անպատասխան մնաց:

— Սաթենիկ, աղջի քեզ հետ չեմ, մի ասա տեսնեմ է, ասա քեզ մատաղ, ասա բալաս, մի' ամաչիր թախանձեց Զաւահիր-բաշին:

Սաթենիկը դուխը խոնարեցրեց 'ի նշան համաձայնութեան:

Մայրն ուղեց կրկին խօսել, սակայն նա թողեց նրան,

վաղեց տուն, դուրս տարաւ գեղեցիկ կապերար փոեց  
որահին ընկած թախտի երեսով, ինքնաեռն էլ զրեց այն-  
տեղ, բաժակները լուաց մաքրեց, սրբեց կապերարի շուրջը  
փոեց փափուկ զօշակները և սկսեց սպասել ձնողներին:

Զաւահիր բաշին էլ դաճղաղ քայլերով տուն եկաւ  
իւր հետ բերելով ափսէն լի ամեն տեսակ կանաչեղներով.  
որը զրեց սենեակի պատում շինած պահարանի մէջ,  
ապա դուրս եկաւ և բարձրացաւ թախտի վրա նստեց:

Մայր և աղջիկ սկսեցին սպասել Սիմոն ապօրը, որը  
դեռ ժամից տուն չէր եկել: Նա պիտի գար, որպէս  
զի մէկաեղ թէց խմէին:

Կէս ժամից յետոյ համրիչը ձեռին, չուխայի երկար  
թերերը դէս զէն ձգելով, Սիմոն ապերը ամենածանր  
քայլերով եկաւ տուն: Կնոջն ու աղջկան «ողորմի Աս-  
տուած» ասեց, ապա բարձրացաւ և թախտի վրա նստեց:

— Կինը պատասխանեց «ողորմի ձնողացդ»:

— Ի՞նչ նորութիւն, հարգրեց Զաւահիր-բաշին:

— Էհ, մի էնալէս նոր բան չկայ. պատասխանեց Սիմոն-  
ապերը:

Այդ միջոցին Սալենիկին հարեւան աղջիկը կանչեց:  
Նա շտապեց այնտեղ:

— Մի լաւ տղայ չ'արւեց էլի, որ էդ աղջիկը պսակէինք.  
ասաց նրա ետելից Սիմոն ապերը:

— Էհէէ, ինչ է՛, աւելացրեց Զաւահիր բաշին. դու էլ  
հօ որ մի խօսքի վրա պնդվում ես, էլ կակղացնելու նար  
չի իխում: Սիր Մանասը ինչ պակաս տղայ է. գեղեցիկ,  
շնորհով, համեստ . . . . :

— Այ կնիկ, էն օրը իմ աչքով չտեսայ, շիրախանից

դուրս գալիս:

— Այ մարդ, էդ մի ասիլ դու հօ նրա ձնողներին  
ճանաչում ես. ախր, որ նա մի լաւ տէր ունենայ, էպահէս  
չի անիլ: Մեր ձեռքն ընկնելուց յետոյ, նա բոլորովին կը-  
փոխւի: Փառք Աստուծոյ, նա էլ իր ասածին մարդ չէ,—  
կոպիտ չէ, որ բարի խրաները չմակ:

— Այ կնիկ, վերջապէս ես դժուարանում եմ, ախր երե-  
խայ հօ չէ, որ սաենք գուցէ մեծանայ ու լաւանայ, ախր  
էդ բնաւորութիւնը, որ նա ունի, չէ որ դա միանգամայն  
արմտացած է նրա մէջ. նա հօ էլ չի փոխելու:

Այդ խօսակցութեան միջոցին յանկարծ ներս մտաւ  
մի շիկամորուք քահանայ,— զա նրանց ծխատէր քահանան  
էր և այդ քաղաքի գործակալը:

Սիմոն ապերն ու Զաւահիր բաշին նրան տեսնելով,  
խկոյն աւելիրը կանգնեցին: Քահանան «բարի ողջոյն» մտղ-  
թեց, ապա առանց նրանց առաջարկութեան ինքը բար-  
ձրացաւ և նստեց թախտի վրա ծղաց փափուկ զօշակին:

Նրա մօտ նստեց Սիմոն ապերը:— Զաւահիր բաշին  
ձեռները կոխած գօտու մէջ կանգնած մնաց:

— Աղջի՛, ի՞նչու չես նստում, ասաց քահանան:

— Նստի չայ տուր խմենք. աւելացրեց Սիմոն-ապերը:

Զաւահիր բաշին քնթկալը աւելի բարձր քաշելով  
ճակատի քողը առաջ ձգելով նստեց ինքնաեռի մօտ և  
ամենքի համար չայ պատրաստեց:

— Հմմմ.. ասացէր տեսնեմ. ի՞նչպէս էք, ի՞նչ խարար  
ունիք, խօսեց քահանան:

— Ոչինչ, հենց քո առողջութիւնը կուզէինք իմանալ,  
տէր-տէր. պատասխանեց Սիմոն ապերը:

— Սիմոն, Աստուած վկայ է քեզ հետ կուելու եմ թէ

դու իմ խօսքը չկատարեցիր:

— Ի՞նչ է, տէր-տէր, ասա տեսնենք, գուցէ կատարելու  
եմ. պատասխանեց հեղնօրէն Սիմոն ապերը:

— Սիմոն, զիտես, որ ես քեզ ամենքից էլ շատ եմ  
սիրում:

— Դա Աստուծոյ է յայտնի:

— Գիտես, որ ես չեմ ուղենալ աղջկադ բաղար սետքնելու:

— Գիտեմ, զիտեմ:

— Դէ, ուրեմն համաձայնւիր, տանք Մանասին:

— Տէր-տէր, հիմա մենք էլ զրա վրա էինք խօսում,  
ախր որ նա էդ զինին ու արադը նանաչէլ է, զրա  
վերջը լաւ կլինի:

— Սիմոն, ես քեզ ասում եմ, որ նա էդ խաղն ու զի-  
նին այնպէս կթողնէ, ինչպէս որ դանակով կտրած մի  
վէրք: Ախր չահիլ է, Աստուծած տանէ նրա հօրն ու մօրը,  
նրանց գու հօ զիտես էլի. դառնալով Զաւահիր-բաջուն.  
աղջի էնպէս չէ:

Նա գլուխը շարժեց:

— Բայց, որ քո սանծի տակ ընկնի, շարժւնակեց քա-  
հանան, այնուհետեւ գու նրան կարող ես մի էնպէս մարդ  
շինել, որ հատը բնաւ չլինի:

Սիմոն ապերը գլուխը շարժում էր:

— Հմմմ... վերջազրու, Աստուծած շնորհաւոր անէ, չէ.

գոչեց քահանան նրա ուսին խփելով:

— Տէր-տէր, չայդ սառաւ, խմի, կմաաձենք, յետոյ հեշտ  
է էլի. ասաց Սիմոն-ապերը:

— Ախր, ես զիտեմ է, որ գու էդ խեղն աղջկայ կեանքը  
սեազնելու ես. գոչեց դժոհաբար քահանան:

— Դէ, լաւ լաւ չայդ խմի. հեշտ է էլի ասացի. խօսեց

Սիմոն-ապերը:

— Հա, դէ օհրնեալ լինես, դէ մեռք դուր: Տէր-տէրը  
Սիմոնի ծեռն առնելով. ես իմ հողիս Սիմոն. ես ծեղ  
համար գաւում եմ, էն աղան մի շատ երեելի տղայ պիտի  
լինի, ախր չեմ ուղում ծեղանից հեռանայ է, մանաւանդ,  
որ խեղճն էլ տաք տաք սիրում է ծեր աղջկան, էնպէս  
սիրար կկոարեն, ա՛ նամարդ. վերջի խօնքը ասելով մի  
մի կծու հայեազը ծղեց Սիմոն ապօր գէմքին ու զլուխը  
շարժեց:

Սիմոն, ապերը ժապաաց: Թէի բաժակը բարձրացնե-  
լով դէպի նա ասաց.— Առ տէր-տէր. առ խմի, ախր սա-  
ռաւ է:

— Որդոցս արևով երդում եմ, որ մինչև ինձ մի վճռա-  
կան պատասխան չասես, չեմ խմելու:

Սիմոն-ապերը լուեց:

Լուց և քահանան:

— Սիմոն, եկ գու խօսքս մի կոտրիր, եկ համաձայնւիր,  
եթէ վերջը մի վնաս տեսնաս, ես պատասխանատու կլի-  
նեմ. ասաց քահանան սրբազան լուութիւնը բնդհատելով:

— Դէ, լաւ, տէր-տէր, մեղքը քո վիզը, ինչ որ կինի,  
կինի: Քահանան դժգունած ու խոժոր գէմքը մեղմացնելով,  
ժպիտը բերանին, ծեռքը զնելով Սիմոնի ուսի վրա ու  
քանի օհրնանք թափելով թէի բաժակը առաւ ու խմեց:

Թէլ վայեկեցին: Աաթենիկը գեռ չէր խմել, նա էլ  
քահանայի մօտ չէր գալ: Զաւահիր-բաշին ինքնաեռը տա-  
րաւ ներս, կանչեց Սաթենիկին, որ սենեակի ետեի դոնով  
ներս գնա և իւր թէլ վայեկեղ խմէ:

— Դէ, ես դնում եմ, մի վճռական խօսք առացէք, որ  
ասեմ նշանալրութեան պատրաստութիւն տեսնեն. ասաց

բահանան պատրաստելով տեղից վեր բարձրանալ:

— Սիմոն ապերը ժաղաց և ոչինչ չխօսեց:

— Այս, Աստուած, ինչ անեմ սրա հետ գոչեց տէրտէրը:

Զաւահիր-բաշին ընկաւ Սիմոնի ականչին և մի ինչ բան փսխաց:

— Դէ, լաւ լաւ, տէրտէր, երր ուղում են թող բերեն, ասաց վերջապէս հաղիւ թէ համոզւած Սիմոն-ապերը:

Տէրտէրի ուրախութեան չափ չկար: Սիրար բերկրութեամբ լի «խաղաղութեամբ մնաք» ասաց, տեղից բարձրացաւ ու դուրս դնաց:

¶

Այս դէպքից մի շափաթ չ'անցած՝ չորեշարթի զիշերն էր, որ Սիմոնի աղջկայ նշանալրութիւնը կատարում էին:

Սիմոնենց տուն մի տեսակ կենդանութիւն էր ստացել: Երկու սենեակներն էլ փառաւոր կերպով դարդարել էին: — Ասիական նաշակի համեմատ յատակները ծածկել էին զեղեցիկ գորգերով, նրանց երեսներով երկու շարք փուլ էին փափուկ դոշակներ: Գորգերի վրա երկու շարք շարել էին պղնձեայ մաքուր ու փայտուն մոմակալները: Դրսումը սրահի զերաններից կախել էին մի քանի հին զրեթէ կիսամաշ, զոյնզոյն կտորներից շինած լապտերներ:

Բաղի մէջ տեղ «օչախ» էին շինել, ուր և պատրաստում էին տեսակ տեսակ անուշահամ կերակուրներ:

Բարեկամները բոլորն էլ հաւաքւել էին: Մի քանի ժերունի մարդիկ ժալապատիկ նստուած համ թէյ էին

խրմում, համ էլ զուարնանում էին պէսպէս զրոյցներով: Իւրաքանչիւրը իւր զիսի անզըն էր պատմում: Մէկը պատմում էր թէ ինչպէս էր իբրահիմ խանի ժամանակները նուշու զրութիւնը, մի ուրիշը նուշում սուտ լուրեր տարածւելն էր պատմում: ասում էր մի թէ ինչպէս սուտ տեղից լուր տարածւեց, որ թուրքերը գարձեալ յարձակվում են Ղարաբաղի վրա և այն. այսպէս երկար ու բարակ զրոյցներով սպասում էին խնամիներին: Այստեղ էր և մի ժերունի քահանայ:

— Ախր էս ի՞նչու ուշագան. արանչաց նա:

— Տէրտէր կզան էլի հէր օհրնած, էլ ի՞նչ էս շատապում: խօսեց մի ալեզարդ ժերունի:

— Պետք է մարդ ուղարկել, միթէ զիտէր ձեր. ասած մի երիտասարդ ու իսկոյն տեղից վեր բարձրացաւ, զուրս եկաւ և մի լապտեր տալով երկու փոքրիկ աղաների, ուղարկեց խնամիների ետևից:

Վերջապէս զուռնայի ձայնը լսւեց: Մանասը նշան-զրիքումն էլ զուռնա էր տանում:

Սիմոնենց երիտասարդ հիւրերը, — բոլորն էլ իսկոյն զուրս թափւեցան զիմաւորելու նորեկ հիւրերին:

Ուռաների, զուռնայի ու թմբուկի ձայներով միախառնւած խնամիները ներս թափւեցան:

Սիմոնը ամենքի ծեռքը սեղմեց, ամենքի դալուստը շնորհաւորեց, երիտասարդներին էլ այնպէս ուրախ օրեր մազթեց, քաղզը ու համեստ խօսքերով ամենքին սենեակ հրաւիրեց, փափուկ դոշակներին նստացրեց և ապա իւրավիններին հրամացեց թէյ բերել:

Մանասը ամենքից յետոյ ներս մտաւ: Նրան ուշացրել էին Սիմոնենց տան կնանիքը: Ամենքն էլ հրճում էին

նրան տեսնելով։ Զարդարւել էր նա փառահեղ կերպով։ կանաչ մետաքսէ արխալուզ, սև մահուտէ չուխա, երծաթէ զօտի, եւրոպական ճատ-ճատալիս կօշիկներ, այս բոլորը նրա փառվուուն գէմքի հետ մի դիւթիչ պատկեր էր ներկայացնում։ Նա իւր այդ հրաշալի պատկերով կանանց միշից յանկարծ երևաց մէկի աչքին, որի սիրոր սկսեց մերթ ուրախութիւնից, մերթ հետն իսկոյն խօսելու շրմ գանկութիւնից բարախել։

Զաւահիր-բաշին էլ բոլոր խնամի կնանոց ձեռքը սեղմեց, ամենքին էլ «աչքալոյ» ասաց և ապա բոլորին ներս հրաւիրեց։

Սաթենիկին պէտք է պսակէին ոչ թէ Ղարաբաղցու հագուստներում, այսինքն արխալուզում կամ մինթանյուրում, այլ կիսաեւրոպական, կիսավրացնակ ձեռվ։ Եւ հենց այդ երեկոյեան էլ նա զարդարւած էր այդ ձեռվ։ վարդագոյն մետաքսէ կտորից եւրոպական ձեռվ կարած դերիտ, ճակատը կապած ոսկեթելով կարած ժապաւեն, որը տեղական բարբառով ասում են «ճակատեալլուխ», այսերի երկու կողմով կախել էին ոլորտ սև սաթանման մազերը՝ «պօչերը», այդ բոլորի վրացով էլ ծգել էին զեղեցիկ հիւսւած մետաքսէ չիրիլան։ Ոսկու մի փոքրիկ փայլ չկար նրա վրա։ Սովորութիւն չկար ծնողների մէջ, պէտք էր այդ էլ խոստանացն փեսացին, որ տաշին։ ուրեմն այդ մնում էր Մանասին բերելու։ Մանասն էլ տարած էր։

Թէյլ խմեզին վերջազրին։

— Դէ բերէք, բերէք եր«նշանը», բէք օհրնենք. դոչեց քահանան։

— Հա, հա, տէր-տէրը լաւ է ասում. բացականչեցին

ամենքը։

Հիւրերը բոլորն էլ աեղերից վեր բարձրացան և խառնաշփոթ կերպով կանդնեցին։

Մի երիտասարդ զրոխ ներս բերեց մի սեղան, զրեց նիշա սենեակի մէջ տեղը, երեսը ծածկեց զեղեցիկ սփոռ-ցով և ապա այնտեղ զրեց մի մեծ թաշկինակի մէջ փաթաթաց պօտնոց (սկուտեղ): Թաշկինակը վերգրեց։ Բացւեցաւ պօտնոցի մէջ զրած մեծ շաքարէ զլուխը, որը զարդարած էր գոյնզգոյն թղթերի կտորներով, նրա մօտ զրած էր մի կապոց թէյ, երեք փոքրիկ արկղիկներ. մէկի մէջ մի ոսկի մատանի, անդամանդ քարով, երկրորդի մէջ երկու փոքրիկ ոսկէ քորոցներ (գնասաեղներ) երորդի մէջն էլ մի ոսկէ ժամացոյց։ Այդ արկղիկների շուրջն էլ փուած բազրաւէնիներ, — զոյն զոյն թղթերի մէջ փաթաթւած եւրոպական կօնֆէտներ։

Մանասին սեղանի վերի կողմումը կանդնեցրին։

— Դէհ, շուտ արէք, մի ձեր աղջիկն էլ զուրս բերէք է, մի տեսնենք իրար բռնելու են. ուխայ, տեսնում ես սրան, տեսնում ես լիմոն, սրա մի թամաշան հալար արմէ, հազար։ Ա, բեղ հետ չեմ, ի՞նչ ես մաքերիդ մէջ խրւել, մի առաջ եկ է, էս խանի նման փեսացուն ախր քոնն է ե՛, մի առաջ եկ մի լաւ թամաշա արահ. այս խօսքերն ասաց մեղ արգէն ծանօթ լիարգիսը, բռնելով լիմոնի ձեռքից, մարդկանց ետեւ և խորասուզւած անորը կանդնած էր մարդկանց ետեւ և խորասուզւած անուն մաքերի մէջ, առաջ բերեց։

— Ըմմծ... անշնորը, գոչեց նրա ետեից Մէլքիսէթը,

— Դէ, էլ ի՞նչ էք սպասում, շուտ արէք հարսնագուն էլ բերէք է. դուաց մեր բարեկամ համբարձին։

— Համբարձի աչքներդ ծածկեցէր՝ թէ չէ հարսնացուն

տեսնելուն պէս, կ'ուշաթափւիք. գոչեց Սիմոնի բարեկամ-ներից մէկը:

Այդ խօսքերը ամենքի ծիծաղն էլ շարժեց:

Մանասի հետ եկած հիւրերը. Սարդիսը, չամբարծին,  
Մէրիսէթն ու Առաքէլը մի տեսակ տպաւորութիւն էին  
թողել Սիմոնի մէջ:

Շրջապատած պմնազարդ օրիորդներով ու տիկիներով,  
սենեակի միւս գոնից երևաց Սաթենիկը: Հրաշալի էր նա  
իւր գեղեցիկ բոլորակ լուսնի նման պատկերով: Սև մազե-  
րի մէջ տեղ ընկած մարմարափայլ գէմքը ձեւացնում էր  
ծթալից ամպերի տակից ծագող վառվոռուն լուսինը:

Երկու տիկնայր կանգնեցրին Սաթենիկին նիշտ Մա-  
նասի աշ կողմում:

Տէր-հօր ուսերին ծգեցին գեղեցիկ շուրջառը:

Խաչ աւետարանը ձեռն առաւ, տէր-հայրը և սկսեց  
Մանասից հարցնել. ասա որգեակս, հաւանում ես այդ  
աղջկան:

Մանասը ժպտաց և ամօթխածութիւնից կարծրեց:

— Դէ, էլ մի ծիծաղել կրկնեց բահանան, ասա, տիր  
առանց յօժար կամքն իմանալու ես իրաւունք չունեմ  
օհրնելու:

— Է՛՛՛, տէր-տէր, գու էլ իսկի մի բան չես հասկա-  
նում, էլ դրա համար մեռնում է, մեռնում, զիշեր զերեկ  
ուշ ու միաքը միշտ զրա վրա է, հիմա ինչպէս թէ «հա-  
ւանում ես», ասաց Սիմոնի աղջականը, որև ծիծաղա-  
զրեց ինչպէս Մանասին, այնպէս և բոլոր հանդիսական-  
ներին: Վերջապէս Մանասը «այս» ասաց և տէր-հօր հար-

ըլ դրանոր վճռւեց:

Ապա քահանան դարձաւ Սաթենիկին. դու ասա, որ-  
գեակ, հաւանում ես այդ տղային, քեզ պիտի տանք սրան,  
պիտի այսուհետ սրա հետ ապրես:

Սաթենիկը, ի հարկէ ինչպէս յայտնի է Մանասին  
չերմ սիրող լինելով, ամենայն ուրախութեամբ իւր համա-  
ծայնութիւնը կայանէր քահանային, սակայն ամօթխա-  
ծութիւնից ստիպւած, անշարժ արձանի նման մնացել էր  
լուռ կանգնած, ոչ խօսում էր և ոչ էլ զլուխն էր խոնար-  
հեցնում՝ ի նշան համածայնութեան, որ և վերջինս ինչպէս  
սովորութիւն էր Շուշում:

Տէր-հօր երկրորդ հարզի վրա մի կին մեկնեց ձեռքը  
գէպի մեխւած արձանանձան Սաթենիկը և շարժեց նրա  
զլուխը, զրանով և բաւականազրեց տէր-հօրը:

Վերջապէս քահանան կարդաց «պահպանիչ», օհրնեց  
այն ոսկէ զարգերը, երկար կեանք, բարի և երշանիկ օր  
մախթեց, ապա աւետարանը մեկնեց գէպի Մանասն ու  
Սաթենիկը: Վերջիններս համբուրեցին: Մանասը իսկոյն  
զրպանից հանեց մի բուրյի և զրեց աւետարանի վրա:

Տէր-հայրը կրկին օհրնեց. «օհրնեալ լինեք, որդիք,  
զօրանաք, միշտ սիրով ապրէք և Տէրը պահէ, որ շուտով  
տէր-տէրը պսսակէ», ասաց և ապա աւետարանը զնելով  
սեղանի վրա, հրաւիրեց բոլոր հիւրերին համբուրելու և  
«խաչահամբոյք» ծգելու:

Հիւրերից, որը համբուրեց խաչահամբոյք տուաւ, որն  
էլ ոչ միայն խաչահամբոյք չտուաւ, այլ և աւետարանն էլ  
չհամբուրեց:

Ծերունի Մանուկը, Սիմոնի հօրեղբայրը, առաւ տ-  
րապի բաժակը բացաւ բերանը և ասաց. Օհրնւիք դուք,

զաւակներս, բարի վայելումն լինի, երկար կեանք ունենաք, բաղպաւոր լինեք, մէկ տեղ աճեք, մէկ տեղ ձեծանաք, մի բարձի վրա ծերանաք, է՛հ, մենք էլ ահա ոսներիս մէկը դերեզմանումը միւար այսաեղ, մեզանից յետոյ մարած օշախների լոյսը գուշ էր, Աստուած տայ ձեր մի բուռն հողին արժանի լինենք, որ ծգելու էր մեր մեռած երեսներին, ապա արազի բաժակը դարպակից ու հեռացաւ:

Հիւրերն էլ մի մի բաժակ արազ վայելելով, բերանները բաղզրեղեններից բաղզրացնելով, օհրնեցին, շնորհաւորեցին և հեռացաւն:

Մանասը ինքը մատանին ծգեց Սաթենիկի մասը, իսկ մնացած ոսկեղեններով նրա կուրծքն ու ճակաար դարպարեց մի տիկին: Սաթենիկն լոլոր ափիկններով ու օրիորդներով շրջապատուած հեռացաւ միւս սենեակ և բազմեց իւր համար յատկապէս պաարաստած աթոսի վրա:

Տիկնների ու օրիորդների համար հացկերոյթը եւրոպական ծեռով աթոռների վրա, սեղանների ևաեն էր պաարաստած, իսկ տղամարդկանցը յատակին՝ զեղեցիկ դորդերի ու փափուկ գոշակների վրա:

Երկու սեղաններին էլ արդէն պաարաստ էին:

Մանասը, սովորութեան համեմատ, չպիսի հեռանար Սաթենիկից, այդ պատճառով նա կանանց հետ պիտի սեղանակից լինէր:

Տէր-հայրը օհրնեց սեղանը: Այնուհետեւ սկսեցին կարգէ կարգ անուշահամ կերակուրները վայելել:

Հիւրերից մէկը թամալա ընտրւեց:

Գինին խմում էին, կերակուրները ուառում, ուրախ քէֆ անում:

Սիմոնը բանի մի մարդկանց աչքում մլատ էր երեւում:

Գինին նրա տանը այնքան առատ չէր, որքան. որ չամբարծին ու իւր ընկերներն էին զանկանում:

Նրանցից իւրաքանչիւրը՝ շատ խմէր, մի ութ, կամ տաար մանը բաժակ, բայց այդ ի՞նչ նշանակութիւն ունէր չամբարծու կամ նրա ընկերների համար: Միթէ տաար բաժակով կարելի էր յագեցնել նրանց ծարաւը: Իւրաքանչիւրին չորս-հինգ շիշ բաւական չէր, ուր մնաց ութ, տաար բաժակը: Բայց և այսպէս այդ տեղ տեել չէր կարելի խմել: Միշա պէտք է հետեւ թամապայի առաջարկութիւններին:— Թամալան էլ աշխատում էր, որքան կարելի է շատ կենացներ առաջարկել, սակայն քիչ զինի խմել:— Երեք-չորս կենացը խմում էին մի բաժակով:

Ինչ և իզէ մեր վաղեմի լոթիների տեղը հանգիստ չէր:

— Ճմմմ... Առաքել, ախր ի՞նչ անենք. հարզրեց չամբարծին, որքան մտածում եմ՝ էլի պէտք զնանք Մկրտչի մօտ:

— Էդ, շատ լաւ է, խօսեց Առաքէլը, բայց Սարգսին բոլորովին անյարձար է հեռանալլ, իսկ մեր զնալու համար էլ պէտք է յայտնենք՝ հարա ի՞նչպէս անենք:

— Է՛հ, յիմար, էլ ինչու ենք Սարգսին յայտնում, նա շատ քէֆերում մեզ չէ կանչել, սպասեցէք, սպասեցէք, առաջ ես գուրս գամ և փողոցում սպասեմ, յետոյ գուր Մելքիսէթ, յետոյ էլ Առաքէլը. այս երեքս էլ բաւական ենք կնստենք էնտէղ մի լաւ քէֆ կանենք. ասաց չամբարծին:

— Է՛է՛է, էդ հեշա է, գուր էն ասա, ախր ի՞նչպէս պիտի անենք, Մկրտչին հօ լաւ էք ճանանչում, առանց սրան զիտէք, որ մի կաթ անզամ չի տալ. խօսեց Մելքիսէթը բութն ու զուցամատը միմեանց քսելով:

— Դրա բանը խէր է, թէ ճար չլինի, համբարձու զօտին  
զրաւ կտանը. խօսեց Առաքելը, դառնալով համբարձիին.  
հմմմ... համբարձի էնպէս չէ:

— Ես հիմա հենց այդ մտածում էի, ՚ի հարկէ, Մկրտչի  
ասած, էսպէս մէջքիս կապած ինձ հօ շունչ չէ տալիս,  
մեռած տեղս էլ հետո հօ չէծ տանելու, գերեզմանումս էլ  
չեմ կապելու հօ:

— Դէ, որ էզպէս է, համբարձի, դու կամաց կամաց դուրս  
եկ. ասաց Մելքիսէթը:

— Դէ, սպասեցէք, ՚որէն մի կենաց էլ են առաջարկում,  
թողէք էն էլ խմեմ, էլի մի բանէ, այնուհետև զնամ:

Թամադան այս անդամ բարեբաղտաբար երկու խնա-  
միների կենացն էր առաջարկում և հրամայում էր, որ  
հիւրերը— իւրաքանչիւրը երկու բաժակ դարտակէին  
երկու սիրելիների կենաց համար:

Համբարձին երկու բաժակները դարտակեց, թաշկի-  
նակը հանեց շրթունքներն ու բեխերը սրբելով դուրս  
դնաց:

Նրանից յետոյ էլ հերթով դուրս եկան Մելքիսէթն  
ու Առաքէլը:

Սրագ քայլերով մեր պարոնները շտապեցին դէպի  
վաղաձանօթ Մկրտչի դինեառունը:



Թ

Կէս զիշեր էր: Ժամի տասներկուսը: Ամենըն էլ քնաք  
էին: Բնութիւնը նիրհում էր խորին անդորրութեան մէջ:  
Փաղածուն լուսինը կապոյտ երկնակամարի երեսին  
փրուած պսպղուն աստղերի մէջ տեղ ընկած, սիուէլ էր  
խաղաղ աշխարհին իւր կաթնանձան շողբերը Խանութ-  
ները բոլորը փակած էին: Բաց էր միայն զինեաները:  
Շուշումն էլ ոստիկանութիւնը այնքան խիստ չէր, որ  
զրանց էլ արգելէր այլքան ժամանակ բաց պահելը:  
Մկրտչը միայնակ նստած խանութի մէջ զաստոյկայի  
ևտև ծխում էր:

Ցանկարծ ներս մտան իւր ամենասիրելի «մուշտա-  
րիները»:

— Բարիկուն, Մկրտչ, Է՞ս, ա շան աղայ, գոռաց համ-  
բարձին ծեռքով մի պինա զարկելով զաստոյկային:

— Ո՞օօ, համբարձում աղա, բարով, բարով, ա կամաց,  
ա անարանդ. ասաց ժպտալով, տեղից վեր բարձրանալով  
զինեվառառ. Մկրտչը:

Համբարձիից յետոյ ներս մտան Մելքիսէթն ու Առա-  
քէլը: — Նոյնպէս բարի երկոյ մաղթեցին, ապա անցան  
խանութի մի անկիւնում ընկած թախսի վրա պառկեցին:

— Ա՛, դուք ախր նշանազրիք էիք գնացել, շնորհակալ եմ  
Վանասը ինձ էլ շատ խնդրեց, բայց չկարողացայ դալ, բա  
զուք ինչու էք եկել. հարզրեց Մկրտչը:

— Ծմմմ... Ծմմմ... Մկրտչի, քո արեն եմ ասում, էնքան  
զինի չէին բերել, որ բօղաղներս թաթախի, սրաներըս նաք-  
վում էր, զրա համար լաւ հաշւեցինը էլի էստեղ, էլի էս  
քո «բարբաղլուտ» լաւ է ամենից. պատասխանեց Առաքէլը

— Մկրտիչ, էս անտէրի զլուխը ախր ցաւում է, սրա  
մի ճար պիտի անենք. ասաց համբարձին, զոյց տալով իւր  
մէջքի կապած երժաթէ գոտին:

— Օ՛օ՛, դրա զլխի ճարը շատ հեշտէ, որ մանի մեր  
«դախլը» (կասսան) զլխացաւը իսկոյն կ'կտրի. պատաս-  
խանեց Մկրտիչը:

— Հա, էդ լաւէ, էէէց, քէֆֆ, քէֆ, «բայեամ նա  
թահրը», ասաց համբարձին ու պարելով յետ արաւ ժանր  
երժաթէ գոտին, ծգեց զաստոյկացին գոչելով. երեսուն մա-  
նէթ «նաղդ» փող եմ տուել է, դէ ասա, Մկրտիչ, ասա  
տեսնեմ դու որբան պիտի տաս:

— Հեշտ է, անաշէն, դեռ նստի քէֆ արա. կեր, խմիր,  
ամմա շատ լաւ էլ խաշած տաւարի միս ունիմ հա:

— Պահ, պահ, պահ, ծայն տուեց համբարձին: Դէ, բեր,  
բեր, հմմմ.. շուտ արա բեր տեսնենք. այս ասելով վա-  
զեց և ծալապատիկ թախտի վրա նստեց:

Մելքիսէթը աչքով մի ինչ բան հասկազրեց Մկրտչին:  
Վերջինս մի քանի դրամ համբարձից ժամուկ կոխեց նրա  
ափը:

Մելքիսէթն ու Առաքէլն էլ նստուեցին թախտի վրա:  
— Մկրտիչ, բեր տեսնենք. գոչեց Մելքիսէթը:

Մկրտիչը մի կուլա զինի և խաղալու թղթերը բե-  
րաւ և դրաւ նրանց առաջ:

— Օ՞հ, օ՞հ, բո ջանին ժատաղ, օ՞հ, մի թողէք, մի թողէք  
մի լաւ, մի «բլքլալի» խմեմ է. ասաց համբարձին և  
իսկոյն զինու կուլան առաւ. ծեռքը սկսեց զինին հենց  
կուլացից խմել: — Ուխայ. ասաց նա կուլան վայր գնելով:

Մի մի բաժակ էլ Մելքիսէթն ու Առաքէլը խմեցին:  
— Հմմմ. համբարձի, չես խաղնում. հարզրեց Մելքիսէթը:

— Ախր փող չունեմ. պատասխանեց նա:

— Մկրտիչը կտայ. ասաց Մելքիսէթը, ապա դառնալով  
նրան. Մկրտիչ, ա մի մանէթ էլ է տուր համբարձուն է.  
ախր մինչեւ քո դէն գէն պատրաստելը ի՞նչով պիտի  
զբաղւինք:

— Իձ աչքի վրա. համբարձուց երբ եմ խնայել. որ այժմ  
էլ խնայեմ. ասաց Մկրտիչը մի նոր բուլիխնոց ծեռին  
խաղացնելով տարաւ և տուաւ համբարձիխուն:

Առաքէլը՝ ինչպէս երեսում էր, փող ունէր. մի քանի  
պղնձի և արժաթի զրամներ զբաղւնից հանել էր և  
տուաչը փռել:

Խաղը սկսւեց:

Համ խաղում էին, համ էլ խմում:

Մելքիսէթը համբարձու բուլիխնոցը տարաւ:

— Մկրտիչ, ես ծեռնեմ, մի մանէթ էլ տուր. գոչեց տա-  
քազած համբարձին:

— Օ՞հ, օ՞հ, «բաշ ուստա». պատասխանեց Մկրտիչը և  
մի նոր բուլիխնոց տուաւ համբարձիխուն:

Այդ էլ մտաւ Մելքիսէթի զբաղւը: Խա-  
գինին բաւականին աաքազրել էր համբարձիխուն: Խա-  
զալուց զափարեց, գոռաց, որ զինի բերեն, սուփրան փռեն:

Մկրտիչը մոմուլով սուփրան փռեց, երեսը ծածկեց  
հացով, սոխով, աղամանով և մի աման էլ խաշած մսով:

— Էյ, ա շան աղայ, Մկրտիչ. գոչեց համբարձին. ախր  
երեսուն մանէթ փող ունեմ մօտդ է, էն ձկան զօշերիզը  
ի՞նչի չես բերում էստէզ:

Մկրտիչը այդ էլ իսկոյն կատարեց, կուլան էլ կրկին  
լրբզրեց և դրեց սփռոզի մի կողմում:

Երեք լոթիները բազմեցին սեղանի շուրջը և իրենց

անճոռնի դուռզով սկսեցին քէֆը:

Առաքէլը թամալա էր. էլ կենացներ չմնաց, որ  
չառաջարկէր:

— Թէ, որա ստեղծողի հոգուն մատաղ, ուխայ, աղա  
մի սրա նայեցէք է, կասես «եաղուտ» լինի եաղուտ. ասաց  
Մելքիսէթը լրջնելով իւր բաժակը, մի շերմ կերպով էլ  
բաժակից համբուրելով զրեց իւր առաջ և սպասեց թա-  
մալայի առաջարկութեան:

Համբարձին էլ իւր բաժակը լրջրեց:

— Դէ՞հ, տղերը, խօսեց Առաքէլը. էս թասն էլ կիմմնը  
մեր Մանասի ու իւր հարսնացուի կենացը, դուք, շարու-  
նակեց նա, լաւ զիտէք ՚ի հարկէ, որ Մանասը մեղ համար  
հոգի չի խնայել, ես զիտեմ, նա երբ որ իմանայ մեր հե-  
ռանալը, պիտի թիչ տիրի, բայց յետոյ էլ անպատճառ  
ինքը մեղ կվարձատրէ, էս լաւ արինք, մի էսպէս քեփ էլ  
Մանասի վրա թողեցինք, էն էլ Աստուծով յետոյ կվայելենք:

Հմմմ... դէ խմեցէք. Առաքելը խօսքը վերջացրաւ և  
իւր թասըն ուղեց զարդակել, յանկարծ Մելքիսէթը ծեռ-  
քից բռնեց ու զոռաց. սպասիր, Էյ սպասիր, էս շատ լաւ  
կենաց է, Մանասը մեր աչքի լոյսն է, դէ մի լաւ, ուրա՞,  
ու յետոյ խմենք, հմմմ. ուրանա՞....

Լոթիները բարձր ուրայով զզրդացրին խանութը:

Ուրայից յետոյ բոլորն էլ կրկնելով, «Մանասի կենացը»  
բաժակները զարտակեցին:

Գինու կուլան յաճախ զարտակւում էր ու կրկին  
լրդուում: Զուրն էլ այնքան չէր կարելի խմել, որքան որ  
մեր լոթիները զինի էին խմում: — Խմեցին զրեթէ մինչեւ  
վերջին ոյժը:

Վերջապէս զարտարեցին:

Մկրտիչը անդադար շարժվում էր: Քնել էր  
ուղում: Ի՞նչ անէր, ձեռքը լաւ որս էր ձգել, վաղուց  
էր վրա վրա աչք զրել, ուրեմն այժմ էլ պէտք է,  
համբերել: Սակայն քունը բոլորովին չէր մօտենում մեր  
լոթիներին: Աքաղաղներն երրորդ անդամն էլ կանչեցին:  
Արևելեան հորիզոնը շառագունել էր: Ինչպէս երեսում էր  
լոյսը շուտով պիտի ծագէր:

Վերջապէս վերկազրաւ Մկրտիչը լոթիներին և  
խնդրեց, որ դուրս գնան:

— Մկրտիչ, էյ ա՛ շան տղայ, զօտիս ինչու ես վերջրել,  
տուր էսաէղ. ասաց արորւելով Համբարձին:

— Գնա տուն Համբարձի, զնա մի թիչ քնիր ուշըդ  
զուկըդ գայ, ասաց մեղմօրէն զինեվաճառ Մկրտիչը:

— Գօտիս տուր. կրկնեց Համբարձին:

— Ի՞նչ զօտի, ախր ի՞նչ ես ասում, զօտու փողը բոլորը  
ստացել ես, էլ ի՞նչ ես ուղում, բօծ. կրկնեց աւելի քաղ-  
զրութեամբ Մկրտիչը:

Համբարձին անդադար արորւում էր. — Տուր, աւել մի  
խօսիլ, ես զիտեմ, որ քեզ մօտ է, խօսեց նա:

— Վայ, զարձագը է՛ ե՛, աւելազրեց Մկրտիչը:

Մելքիսէթն ու Առաքէլն էլ թախտի վրա պառկած  
անդադար զոռում էին: Զարձանալի էր, քունն էլ չէր  
մօտենում զրանց:

Համբարձին իւր զօտին էր պահանջում: Մկրտիչը  
պնդում էր, որ զօտու փողը արգէն վնարած էր:

— Տուր, այ շան տղա, քեզ եմ ասում. զոռաց Համբար-  
ձին: Նա որքան հարբում էր, այնուամենայնիւ ուրիշների  
նման խսպառ չէր թուլանում:

Երբ Մկրտիչը սկսեց հրել նրան դէպի դուրս, նա

հանեց դանակը և ուղեց խրել Մկրտչի սիրար: Վերջինս  
աղատվելու համար իսկոյն բռնեց սուր դանակը:

Կարծիր արիւնը առատօրէն սկսեց թափւիլ սրա  
ափից:

Մկրտիչը սկսեց պահապան կանչել:

Համբարձին հանեց կօշիկը և փորձեց զարկել Մկրտչի  
զլիսին: Վերջինս նրա կոներից բռնեց վայր զգեց և սկսեց  
պահապան գոռալ:

Մելքիսէթն ու Առաքէլն էլ հօ անդադար զոռում  
էին, կարծես այն սոսկալի արարողութիւնը ոչ տեսնում  
էին և ոչ այն զոռողները լսուր:

Համբարձին իւր խռապոտ ծայնով ամեն ոյժով զոռում  
էր — Վայ, սպանում են ինձ, աղատեցէր, զօախս զողազան:

Երկու քնաթաթախ պահապաններ իսկոյն ներս  
մտան: Պահապանները մնացին ապշած, երբ կարծիր ար-  
իւնը տեսան:

— Տարէք, Աստուծոյ սէրիւն. զոռաց Մկրտիչը, դանակը  
հանել է և այսաեղ իմ խանութի մէջ ինձ սպանել է  
ուզում, ասաց նա:

— Աղատեցէք ինձ, տուէք իմ զօախն. զոռում էր Համ-  
բարձին, որ ընկած էր յատակին և որի գօշին անգթա-  
բար չոքել էր Մկրտիչը ու թող չէր տալիս շարժւելու:

— Մի վեր կաց է. ասած Մկրտչին ոստիկաններից  
մէկը, հեռացնելով նրան Համբարձիի դոշից:

Համբարձին մի կերպ վեր բարձրացաւ:

— Դուրս քաշիր զրան. ասաց ընկերին ոստիկանը  
զոյց տալով Համբարձիին:

Ոստիկանը բռնել էր Համբարձիի թեքերից և կա-  
մենում էր զուրս քաշել. — Ի՞նչ ես ուզում ինձանից. զո-

ուայ Համբարձին ու փորձեց զիմաղրել:

— Սրի, թէ չէ զուշով կշարւեի. ասաց յամառու-  
թեամբ ոստիկանը:

Համբարձին ոստիկանի զլիսին մի լաւ հարուսած տա-  
լով զոռաց. — Ըմմմ... շան տղայ, ախր ի՞նչ էք ուզում  
ինձանից է: Ոստիկանը իւր ձեռքի երկար փայտով մի  
քանի անգամ զարկելով Համբարձիի ուսերին, քարշ  
տուաւ նրան ու խանութից զուրս տարաւ:

— Տար ուղղակի ոստիկանատուն զոչեց ներսից մեծ  
ոստիկանը:

Համբարձիին քարշ տալով տարան ոստիկանատուն  
և այնտեղ բանտարկեցին մի նեղ, սենեակի մէջ:

Մելքիսէթն ու Առաքէլն էլ գնազին այլաեղ:

Հմմմ... Մկրտիչ, ախր ի՞նչ անենք, առաւօտեան քեղ  
էլ կտանին, ախր էս ինչ «օյիններ» ես սարգել էստէղ.  
ասաց մեծ ոստիկանը:

— Քո արեն եմ ասում, Մատթէոս, այդ անպիտանի  
նման էլ մի հատ չես զանիլ: Քսան մանէթ վաղուց ինձ  
պարտ, էր հիմա էլ վեց մանէթի զինի խմեց, ձեռաց փող  
առաւ թուղթ խաղաց, տանուլ տուեց, դէս դէն կերաւ,  
վերչը մի զօափ էլ էստէղ թողել, որ իսկի տասր մանէթ  
էլ չարժէ, հարբեց թէ՛չէ սկսեց զօախն յետ պահանչել ու  
վերչն էլ էստէս անկարգութիւններ անել, այսպէս գան-  
գաւուեց ոստիկանին զինեվանառ Մկրտիչը:

— Ի՞նչ և իցէ պէտքէ մի կերպ պահապանել. խօսեց քիչ  
զած ծայնով ոստիկան Մատթէոսը:

— Առ, Մատթէոս, քեզ մատաղ, դէ զու հօ կիմանաս  
էլի, թէ իմ կողմից ինչ պիտի ասես պրիստաւի մօտ.  
ասաց Մկրտիչը մի նոր բուրլիանոց կոխելով ոստիկանի

ավեր:

Դու, արխալին կաց, հեշտ է, պատասխանեց Մատթէոսը: Մի մեծ բաժակ էլ արադ խմելով, Մատթէոսը դուրս գնաց:

ՀԱՄԲԱՐՁԻՈՒԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԴՐՈՒԹԻՒՆԻ

## Ժ

Լոյսը ծագեց: Արեք իւր կարմիր ճառագայթները սկսեց սփռել ընաթաթախ աշխարհին: Կեանքը սկսեց եռալ: Մարդիկ շտապում էին դէպ իրենց գործերը: Կանալը բակերը աւլել մաքրել էին, ապա սկսել էին ընտանեկան հոգսերով զբաղւել:

Համբարձու տանից լսուում էր մի խառնաշփոթ աղաղակ: «Հուռի,... Հուռի... ախ Աստուած, ախ, օգնեցէք... Աստուծոյ սէրին օգնեցէք, Հուռիս գնաց, քեզ մատաղ բալա, մի աչերդ բաց այ Հուռի, մի խօսի, ա ես քեզ մատաղ, Հուռի ջան... Հուռի բալա... Հուռի... Հուռի... ախ, այ բալա, ախ, տունս քանդւեց... Աստուած... ախ, ախ,—դա մի կանացի ծայն էր, որի հետ խառն էր և մի քանի մանկական ծայներ. մայրիկ, մայրիկ, մայրիկ... այ մայրիկ... ախ, ախ, մայրիկ-ջան, մայրիկ... ծայները խառն էին դառը ողբերի հետ:—Դրանք պառաւ Սալբու և իւր թոռների ծայներն էին:

Անգաւորները լսելուն պէս ներս էին թափւում: Ի՞նչ էին տեսնում,—մի քանի պատառոտուն անկողիններ

թափւած մերկ յատակի վրա, երկու գողարիկ տղաներ իսպառ մերկ ընկած յատակին՝ աղիողորմ ծայնով ողբալիս, ուսներն ու ծեռները չոր յատակին զարկելիս: Մի անկողնի մէջ միշին հասակով մի կին՝ անշագած ընկած, նրանից վերև մի ալէզարդ պառաւ չոքած անգամար ողբալիս, երբեմն սաստիկ կերպով չոր սրունքներին զարկելիս, երբեմն էլ սառած զիսակը համբուրելիս:

Անպատճառ, սիրելի ընթերցող, իմացաք, որ այդ մեր համբարձու տանն էր. անշնչացած կինը, նրա ամուսինը, պառաւը՝ մայրը, մանուկները՝ նրա որդիքը:

Հուռին վերջին երեխան ծնելու վրա սաստիկ հիւանդանում է: Նրա վրա հոդ տանող չինելով, նրան ոչ ոք օդնելով, նա վերջապէս թողնում է իւր խղճուկ զաւակներին անտէր ու մեռնում:

Հուռին մեռաւ տանոց քահանալին իւր մեղքերը խոստովանելու և առանց հաղորդւելու: Նա փակեց աչերը «ախ անտէր բալէք» գոչելով:

Նա մեռաւ ծանր հիւանդութեան տակ տոչորւելուց, երեք օր բաղցած մնալուց յետոյ:

Նա այն սովորութիւնը ունէր, որ ինչքան էլ քաղցից տանջւէր, մի հարեւանից, մի ազգականից, մի կտոր հաց չէր խնդրել: Նա իւր աան հոգսը ինքն էր տանում իւր օրւաց ապրուսար ինքն էր հայթայթում: Նա իւր վաստակովն էր ապրում, նա դառը քրախնք թափելով էր հայր ճարում և ոչ դռնէ դուռ շրչելով, ողորմութիւն խնդրելով: Սակայն վերջին օրերում նա իսպառ զրկւել էր իւր ոյժեց, մանաւանդ երեխան ծնւած օրից մի շաբաթ չ'անցած հարբած ամուսնուց ստացած ծանր հարւածից իսպառ թուլացել էր: Անա և այսպէս նա

վերջ տուաւ իւր կեանքին, թողնելով անխնամ իւր պառաւ սկեսրին, երկու գողարիկ որդոց և օրօրոզում ծձկեր աղջկան, որոնց միակ ապաւէնը ինքն էր, որոնց ինքն էր կերակրում իւր անխոնչ աշխատանքի վաստակով:

Հուռին մեռաւ.

Ողբում էր պառաւ Սալբին, կոծում էր, լալիս էր, պատճառ, խեղճը իսպառ անջատւեց:

— Ո՞վ պիտի պահէր նրան, ո՞վ պիտի կերակրէր անաէր թոռներին, ո՞վ ծձկեր թոռանը պիտի ծիծ տար:

Ինչեր էր անում նա. չէր զագարում լացից, սրունքները միանգամայն կոտրատել էր ուղում, մազերն էր փետում, կրկին հարսի դալկազած երեսը, հարսի յաւեան փակած աչերն համբուրում:

Հուռի էր գոչում, երբէմն էլ գետնին թափւած թոռներին էր զրկում, համբուրում, զուրդուրում:

Մարդ արձանի նման մնում էր սառած: Արտասուրները ակամայ թափվում էին ամեն մարդու աչերից: Եւ ո՞վ չէր ողբալ, չէր սպալ, թշուառ աղետալի տեսարանը տեսնելով:

Միւնոյն բարեկամները, որոնք ինչպէս առաջուց էլ օդնում էին այդ չուառ լնտանիքին, այդ ժամանակն էլ հոգացին խեղճ, տարաբաղտ Հուռու թաղման մասին:



## ԺԱ

Առաւատեան ոստիկանապետին հաղորդեցին Համբարձիկու, իւր ընկերների և զինեվաճառ Մկրտչի հետ անցած եղելութիւնը:

— Աղա, ախր դու չգիտես Է, էդ անպիտանների բնաւորութիւնը, մի օր օեադ չես տեսնել սրանց: Ամեն օր հարբում են և միշտ անկարգութիւններ անում: Էս զիշեր էլ զնացել են էդ երեք անպիտանները, մտել են էն խեղճ զինեվաճառի խանութը, զինին խմել, հարբել ու յետոյ էլ գանակը հանել որ խեղճ զինեվաճառին սպանեն. ոստիկանապետին այսպէս հաղորդեց Մատթէոսը:

— Աղա, ախր զօտիս... և Համբարձին ուզեց խօսքը շարունակել, ոստիկանապետը իսկոյն զոռագ. ծայնդ կրտրիր, ուծլեց, զեռ համարձակւում էլ է խօսել, տարեք էդ անպիտաններին բանաւարկեցէր և թողէր այնտեղ այնքան մնան, մինչեւ որ մի վեր կտանը:

— Աղա.... զարձեալ Համբարձին ուզեց խօսել:

— Մօլչատ, տեֆք говоряте, զոռագ կրկին հայ ոստիկանապետը և շարունակեց. տարեք, ձեզ եմ ասում, հեռազրէր շուտով, ուսի եակ:

Համբարձին կրկին ուզեց ծայն հանել:

Այս անդամ աւելի անոելի զոռոզով և անթիւ լիշոցներով ընդհատեց նրա խօսքը բարամիրա ոստիկանապետը: Հենց այդ միջոցին, երբ Համբարձիիուն ուղում էին դուրս տանել, յանկարծ նրանց առաջը կտրեց մի բաւականին յողնած մարդ: Դա Համբարձու ազգականն էր:

— Ա. փչանաս. ա բէղասըլ, մրաեղ ես կորել. ասաց այն մարդը Համբարձիիուն, մի կծու հայեազը ձգելով նրա երեսին:

Համբարձին ոչինչ չխօսեց:

— Եղ, որ տեղէք տանում էդ անառակներին. հարզրեց  
նորեկը ոստիկաններից:

— Բանտ. պատասխանեցին նրանք:

— Բա չի կարելի, որ էդ անպիտանին էսօր թոյլ տաք  
ու էգուց ուր ուղում էք տանէք. հարզրեց նորեկը ոս-  
տիկաններից, գոյց տալով համբարձիին:

— Էդ մեր դորձը չէ, հարզրու պրիստաւից. պատաս-  
խանեցին նրանք:

Մարզը մտաւ ոստիկանապետի մօտ. Պատմեց բոլոր  
եղելութիւնը և թախանձեց, որ թոյլ տայ համբարձիին  
գոնէ երկու օր ազատ լինելու, իսկ յետոյ իրենք էլ  
ուրախ կլինէին նրան բանտ ձգելուն:

Երկար ժամանակ ոստիկանապետը չհամաձայնւեց,  
սակայն մարդու անընդհատ թախանձանքներից ստիպւած,  
հրամացեց ոստիկաններին թոյլ տալ համբարձիին. իսկ  
ընկերներին բանտարկել:

Համբարձին Զաքարիայի պէս պապանձւել էր, ոչինչ  
չէր խօսում: Ոչ հարցնում էր թէ ինչո՞ւ համար իրեն  
արձակեցին, ոչ էլ ուղում էր իմանալ թէ ինչո՞ւ իրեն  
տուն են տանում:

Նա զարմացել էր: Որովհետեւ այն ժամանակները,  
երբ ինքը տուն էր գնում, բոլորը զրեթէ զգւում էին,  
իսկ այժմ տանում էին տուն:

Հենց որ ծօտեցաւ իւր տան, ողբի սղի ու լազի  
ծայնը լսեց, սկսեց գողգողալ: Դողդոշուն քայերով ներս  
ժառաւ: Մանելուն պէս պառաւ Սալբին իսկոյն սկսեց  
սրունքներին խփել, լազ լինել լոզի հետն էլ իւր տիսուր  
բաեաթին ասելի որի մէջ նա փայ էր տալիս համբարձու

զլուխը՝ փայ էր տալիս անտէր մնացած թոռներին:

Սակայն համբարձին ոչ խօսեց, ոչ լազ եղաւ, ոչ  
փայ գոչեց, ոչ հառաչեց, այլ լուռ, ծեռները դօշին խաչած,  
արծանի նման մնաց կանդնած:

Նա նայում էր սենեակի մի անկիւնում դրած դա-  
գաղին, նա նայում էր յատակին թափւած մանուկներին,  
նայում էր կսկծալիս պառաւ մօրը, լսում էր նրանց աղի-  
ողորմ ծայնը, տեսնում էր հեղեղանման արտասուբները,  
բայց դարձեալ շարունակում էր իւր լոռութիւնը, չէր  
խօսում ու չէր խօսում:

Սակայն նա նման էր մի վրդովւած ծովի: Նրա սիր-  
ար յուզւած էր և հազարաւոր մաքեր կատաղած ալիքների  
նման ծփծփում էին նրա զիսի մէջ, —այսպէս էր նա  
ներքուստ, իսկ արտաքուստ նման էր մի անշարժ արծանի:  
Նրա զամաք, գալկազած շրթունքների վրա նշմարվում էր  
երբեմն մի դառը ժպիտ, երբեմն մի խուլ մրմունչ:

Զարմանալի բնաւորութիւն ունէր նա: — Ամբողջ գի-  
շերը չէր քնել, այնքան զինի ու արադ էր խմել, սակայն  
նրա վրա այնքան նկատելի չէր արթեցող լինելը: Նա պէտք  
է ասած, որ արթել էր, սակայն ոստիկանների դաժան  
վարմունքը և աչքի տուած ընկած իւր ընտանիքի աղէ-  
տալիպ ատկ երլնրան ուշբի էին բերել:

Այդ ժամանակ էլ նա ոյժ ունէր զգալու և տիրու-  
թիւն, և կոկիծ, և գաւ և տանչանք:

Նա տեսնում էր իւր տան սիւնը ընկած, նա տես-

Նում էր իւր աչքի առաջ հաղար ու մի պատկերներ. անտէրունց որդիք... անխնամ պառաւ մայր... քաղց... ժարաւ... մերկութիւն... բանտ....

Այս, նա պիտի բանտարկւէր, նրա մասին քիչ անգամ չէին գանկատւել Շուշեզիք, նա իւր արբած ժամանակը քիչ մարդկանց չէր հայնոյել, քչերին չէր խայտառակել, հաղար մի վիշոցներ թափել: Խսկ այժմ էլ իւր այդ վերջի անտեղի արարողութեան համար ոստիկանապետի լուրջ ուշադրութիւնը:

Այս անգամ նա առանց ներողութեան կմնայ, նա կբանտարկւի:

Երբ նա մաքառում էր հաղար մի մտքերի դէմ, երբ նրա աչքի առաջ զնում զալիս էին հարիւրաւոր աղօտ պատկերներ, այդ միջոցին ներս մտան մի քանի մարդիկ մի քահանայի հետ:

Մարդկանց առաջ կանգնած էր Մարդիսը և նրա մօտ նոր նշանւած Մանասը:

Պառաւ Սալլիին սրանց տեսնելով, մի խորհրդաւոր կերպով զլուխը շարժեց և երկու ձեռքով սրունքներին պինտ զարկեց:

Քահանան «հոգոցն հանգուցելոց» կարգաց, ապա մարդիկը քանի մի մխիթարական խօսքեր ասելով համբարձին, դուրս գնացին:

Մանասն էլ կամեցաւ գուրս գնալ, յանկարծ համբարձին մօտեցաւ բռնեց նրան և ականջին մի ինչ բան փափսաց ու բաց թողեց:



## ԺԲ

Մանասը փութացաւ Մկրտչի զինետունը: Նրա մի բանի ոչ այնքան մտերիմ ընկերներ այնտեղ թախափ վրա բոլորած թուղթ էին խաղում:

— Ո՞սօ, աղա Մանաս, բարով, գոչեզին նրանք: — Մկրտչի, մի գանակ առւր սրա չուխէն պատառ պատառ պիտի անենք՝ եթէ «նշանի» «շիոնին» չտայ, աւելացրին նրանք, առաջարկելով Մանասին իրենց հիւրասիրելու ՚ի պատիւ նրա նշանապրութեան համպիսին:

— Թէ ինձ մօտ մի կոպէկ փող լինի ես շուն գտոնամ. պատասխանեց Մանասը, յետ քաշւելով ընկերներից:

— Դէ լաւ, լաւ, դէ արի խաղանք, հմ՝ մմ... գոչեզին զարձեալ ընկերները:

Մանասը ժամանակ չունէր խաղալու, նա ուրիշ բանի համար էր եկել, նա մերժեց ընկերների խօսքը:

Համբարձիի փսխոցնէր ողարկել նրան այգտեղ:

— Մկրտչի զարձաւ նա դէպի զինեվաճառը, աւս երշմարիան ասա էսքան մարդկանց մօտ, ասաց նա զոյց աալով թղթախաղերին, ապա շարունակելով. Համբարձիի զօաին արժէ երեսուն րուբլի, իսկ էս վիշեր նա, որքանէ մսիւել, նշանապատ ասա հա՛:

Մկրտչը զունաթափւեց: Ի՞նչ անէր, նա լաւ զիտէր, որ Մանասը որքան համեստ էր, սակայն բարկացած ժամանակը և անազնիւ զորմերի մէջ երբ չարանում էր, այնքան էլ կատաղում էր, իսկ կատաղած ժամանակն էլ Աստուած նեռու տանէ:

Մկրտչը ամենքի մօտ սուա էր խօսել, սրա մօտ էլ սուա խօսէր, իմացաւ, որ վերջը լաւ չէր լինիլ, բայց

և այսպէս դարձեալ վճռեց իւր յօրինած սաերը տաել: Նա պատախանեց, Մանաս, Համբարձին ինծ քսան մանէթ էր պարտ, վեց մանէթ էլ էս զիշեր մսխեց և այնպէս զօտիի հարզը վերջագաւ: Գօտին էլ քսանուվեց մանէթից աւել չարժէ:

Մկրտիչ, սուտ մի խօսիլ էն շան տղի (Համբարձիի) բնաւորութիւնը ամենքին էլ յայտնի է: Նա ինչքան էլ հարբէ, ինչքան էլ թուլանայ սուտ չի խօսիլ, քեզ էլ ամենքը զիտեն, որ մէկին մի կօպէկ պարտք չես տալ:

Մկրտիչը սկսեց երդւել: Աշխատեց հաւատացնել, որ իւր ասածները սուտ չեն: Բայց գուր անցաւ: —

— Մանասը գոռազ, տուր, տւել մի խօսիլ, Մկրտիչ, կամ քսանուչորս մանէթ էլ փող տուր կամ զօտին:

Կորիր էստեղից, շուն շան որդի, քեզ էլ չեմ նանաչում, անպիտան, զայրացաւ Մկրտիչը:

Այդ խօսրի վրա Մանասը կատաղեց: Արիւնը սկսեց եռալ նրա երակների մէջ: Սխալ չէր գուշակել Սիմոն ապերը, որ նա երբէք չի փոխիլ իւր բնաւորութիւնը: Ահոելի գոռոզով սկսեց զօտին պահանջել: Մկրտիչը սկսեց ոստիկան կանչել:

Հանեց Մանասը չուխայի տակ թագրած ատրմանակը և արձակեց դէպի վաշխառու զինեվանառը: Բարերազդարար թէ գժբաղտաբար զնաւակը վիրաւորեց վաշխառուին և ենթարկեց վաս դրութեան: Տրաքոզի ծայնի վրա փողոցի մարդիկը թափւեցին այցաեղ: Մանասը ծերակալւեց: Նրան աարան իւր վաղեմի բարեկամների մօտ: Այնտեղ աարան որտեղ Առաքէլն ու Մելքիսէթն էին:

Այս լուրը հասաւ քաղաքի ամեն անկիւնը: Ամենքն էլ սկսեցին հազար մի խայտառակ և ան-

շարականների հետ մի ողբալի, մի աղջու ներդաշնակութիւն էին կազմում:

Տեսնելով այդ տիսուր տեսարանը, ամեն մարդու աչքից էլ արտասուքը հեղեղի պէս թափփում էր, բայց դարձանալի էր՝ Համբարձու աչքից մի կաթիլ անգամ արտասուք չէր պորփում: Զեռները խաչած, քարէ արծանի նման մնացէլ էր կանգնած:

Դաղաղը դրւոս տարան, այժմ երկու քահանացի առաջնորդութեամբ:

Հաղիւ էին պահում պառաւ Սալբուն, Հուռուս աղգականներին, հաղիւ էին լոեցնում նրա անտէր մնացած որբերին:

Դաղաղը տարան գերեզմանասուն: Գերեզմանը արգէն փորած էր:

Վերջապէս սե հողը կլանեց հուռուսն, երեք անտէր մնացած զաւակների ու պառաւ սկեսրի խնամակալին:

Սանածօր կարգալրութեամբ գերեզմանի մօտ փուել էին երկան սփոռոցը: Երեսը ծածկել էին անթիւ բարիքներով: — այգաեղ կար խաչած միս, պաներ, կանաչեղէն, մրգեղէն և այն: Քանի մի կուլա զինի և մի քանի շիշ էր արադ:

Յուղարկաւորները կերան, խմեցին, հազար անգամ « Աստուած հողին լուսուորի » կրկնելով գրւեցին:

Համբարձին էլ տուն գնաց, մի կտոր հաց կերաւ և ուղեց քիչ պառկել հանգստանալու: Այդ միջոցին յանկարձներս մտան երկու ոստիկաններ և յայտնեցին, որ պրիստուր կտնչում է Համբարձին:

Համբարձին ընդպիմացաւ, չուղեց զնալ: Ոստիկանները ստիպեցին:

Պառաւ Սալբին, որ զեռ ոչինչ տեղեկութիւն չունէր  
և չըր հասկանում թէ ի՞նչուէին կանչում չամբարձիին,  
արտասուքով թաթախած աչերը սրբելով տեղից վեր բարձ-  
րացաւ և իւր գոռոցով սպառնացաւ ոստիկանների դէմ:

Ինչպան էլ, որ որդին «բէկասըլ» լինէր, այնուամե-  
նայնիւ իբրև հարազատ մայր, պառաւ Սալբին զորովա-  
գութ սթառով ցաւում էր չամբարձիի վրա:

Ոստիկանները պնառում էին, որ դա անկարելի է, դա  
պրիստաւի հրաման է:

Չամբարձին ընդդիմանում էր:

Դժբաղաբար այգաեղ մի աղամարդ էլ չկար, մի-  
միայն կնանիքն էին: Նրանք էլ վախենում էին մի խօսք  
արտասանել:

Ոստիկանները ոյժով բարշ առւին չամբարձիին և  
երր արդէն քաշեցին գուրս, այնուհետեւ չամբարձին ինքն  
էլ համոզւեց իւր կամքով գնալ:

Վարդ, բալմ, քեզ ուր են տանում, բալա-չան. զոշեց  
վաղելով նրա եակից պառաւ մայրը:

Երկու փոքրիկ տղաներն էլ հետեւելով պառաւին,  
անդադար գոռում էին. ախ հայրիկ հայրիկ մայրիկ  
«հայրիկ ու մայրիկ» խօսքերը միախառնել էին նրանց  
ողբի մէջ:

Այդ կորուսած ձնողներին էին գոչում. մայրը նոյն  
օրը հողին յանձնեցին, հօրն էլ տանում են բանդարկելու:

Տարաբաղա որդիք:

Դրանք Ռուբէնն ու Տիգրանն էին:

Սրբեցողի որդիքը:

23928

12713



302

30-496/11

heat